Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

26608

Կ. ԿԱՈՒՑԿԻ

ԳՈՐԾԱՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

(ՊՐՕԼԵՏԱՐԻԱՏԸ)

Թարգմանեց

Ս. ՍԵՊԱՀ-ԳԻՒԼԵՍՆ

ԹՕՍՏՕՆ

1905

335
4-23

Գր. 199
335
Կ-23
Հայ գր. 146
197

Կ ԿԱՈՒՑԿԻ

ԳՈՐԾԱԻՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

(ՊՐՕԼԵՏԱՐԻԱՏԸ)

Թարգմանեց

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՐԼԵԱՆ

ՊՈՍՏՈՆ

1905

20 MAY 2013

26.608

05 JAN 2010

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մ. Մ. Մեսրոպ Մաշտոցի անվան

S7248-66

ՀԱՅՈՑ ՊՈՒՍԿ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ
UNION GÉNÉRALE ARMÉNIENNE DE BIENFAISANCE
CONSEIL LOCAL VARNA (Bulgarie)
ՎԱՐՆԱՅԻ ՏԱՍՆԱՄԱՅԻՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սոցիալիզմի պատմութեան մէջ մասնաւոր տեղ է գրաւում 1891-ի Էրֆուրտի ժողովը, ուր մանրամասնօրէն մշակուեցաւ Գերմանական Սոցիալ—Դէմոկրատիայի ծրագիրը։

«Էրֆուրտի Ծրագիրը» և նրա զանազան ստորաբաժանումները առանձին քննութեան և լուսաբանութեան է ենթարկել յայտնի Կ. Կաուցկին իր «Das Erfurter Program» (Էրֆուրտի Ծրագիրը) նշանաւոր գրքով։

Das Erfurter Program գիրքը ամէն ազգերի Սոցիալիստ գրականութեան մէջ յայտնի տեղ ունի բռնած։

Նոյն այդ գիրքը թարգմանուած է և՛ Անգլիերէնի. սակայն ոչ թէ ամբողջութեամբ, այլ նրա գլխաւոր և էական մասերը, բայց առանց մտքի ո՛ և է խաթարումն յառաջ բերելու։

Եւ այդպիսով դուրս են եկած չորս գրքոյկներ — Գործաւոր Դասակարգ, Կապիտալիստ Դասակարգ, Դասակարգային կռիւ և Սոցիալիստ Հանրավարութիւն. որոնք ներգային կռիւ և Սոցիալիստ Հանրավարութիւն. որոնք ներգային սերտ կապակցութիւն ունին իրարու հետ և Սոցիալիզմի գլխաւոր մասերի բացատրութիւնը իրենց մէջն են ամփոփում։

Մենք աւելի յարմար դատեցինք Անգլիական թարգմանութեանը հետեւիլ։

Մի քանի խօսք էլ գործածուած բառերի համար. — ըստ Էնգելսի՝ "Բուրժուա նշանակում է նորագոյն կապիտալիստների այն դասակարգը, որոնք ընկերային արտադրութեան միջոցների և վարձու աշխատանքի տէրերն են։ Պրոլետարիատը արդի վարձու աշխատաւորներն են, որոնք արտադրութեան իրենց սեպհական միջոցները չունենալով՝ հարկադրուած են իրենց աշխատանքի ուժը ծախելու, որպէսզի ապրեն"։

Մտքերի խառնաշփոթութեան տեղի չտալու համար՝ աւելացնում ենք, որ հոմանիշ են՝ Կապիտալիստ, Բուրժուա, Փղշտացի, Շահագործող, Մակաբոյծ բառերը։

Հոմանիշ են և՝ Պրոլետարիատ, Գործաւոր Դասակարգ, Վարձագնով Աշխատող, Վարձագնի Ստրուկներ, Գործաւորներ, Սեպհականազուրկ և՝ ժառանգազուրկ բառերը։

Միևնոյն միտքը ունին Արտադրութիւն և Արդիւնաբերութիւն բառերը։

Ճարտարագործութիւն, Արուեստագործութիւն գործ են ածուած Ինդուստրիա բառի փոխարէն։

Տարազագործութիւն համապատասխանում է Մանիֆակտուրային։

Այլևս կասկած չի կարող լինել, որ մօտիկ ապագան Սոցիալիզմի տիրապետութեանն է. բայց որպէսզի Սոցիալիզմը իր վերջնական յաղթանակը աւելի շուտ տանի, հարկաւոր է որ աւելի շուտ էլ գործաւոր դասակարգը գիտակից լինի իր դասակարգային շահերին եւ կատարի այն հրամայական պարտականութիւնը, ինչ որ նոյն այդ դասակարգային շահերը թելադրում են։

Հայ գործաւորին աւելի դիւրին միջոց չէինք կարող տալ ծանօթանալու Սոցիալիզմի, և հետեւաբար իր դասակարգային շահերի հետ, քան չորս գրքոյկներով նրան ներկայացնելու Das Erfurter Programի էական մասերը։

14 Փետրուար, 1905 Ս. ՍԱՊԱՀ—ԳԻԻԼԵԱՆ

ԲՕՍՏՕՆ

ԳՈՐԾԱՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

(ՊՐՕԼԵՏԱՐԻԱՏԸ)

ԳԼՈՒԽ Ա.

ՄԵՐԱԵՆԱՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Այն ամէն երկրներում, ուր արտադրութեան կապիտալիստական սիստէմն է տիրապետում, — մասնաւորապէս այնպիսի երկրներում, ինչպիսին են Միացեալ Նահանգները, ուր կապիտալիզմը հասած է բարձրագոյն կէտին, — մենք տեսնում ենք որ ազգաբնակչութիւնը գլխաւորապէս բաժանուած է երկու դասակարգի. առաջին՝ կապիտալիստներ, որոնք տէր են արտադրութեան միջոցների – գործիքների, մեքենաների, հողի և ն. – բայց որոնք ա՛յդ իսկ արտադրութեան բնաւ չեն մասնակցում. և, երկրորդ՝ վարձագնով աշխատողներ, պրոլետարիատ, որոնք միայն իրենց աշխատանքի ոյժն ունին և ապրում են նոյն այդ աշխատանքի ոյժը ծախելով ու իրենց այդ աշխատանքն է որ արտադրում է երկրի ամբողջ հարստութիւնը։

Կապիտալիստները պրոլետարների մեծ մթերքի պէտք ունին. սկզբում, ուրիշ երկրների մէջ և անցեալ ժամանակներում, բռնի միջոցների էր դիմում պահանջուած այդ մթերքը մատակարարելու համար։ Սակայն այսօր, մասնաւորապէս Միացեալ Նահանգներում, այդպիսի մեթոդների դիմելու այլ ևս հարկ չկայ։

Կապիտալիստական մեծաստիճան արտադրութեան գերազանց ոյժը փոքր արտադրութեան վրայ ինքնին արդէն պատճառ է դառնում որ — առանց օրէնքը կամ մասնա-

ւոր սեպհականութիւնը բռնադատելու և ընդհակառակը նոյն այդ օրէնքի և սեպհականութեան պատճառով — տարուան մէջ բաւականին մեծ թուով փոքր ագարակապաններ և ճարտարագործներ սեպհականազրկուում են և փողոցն են նետուում ու այդպիսով մտնելով պրոլետարիատի զանգուածի մէջ, նրանք գալիս են բաւականութիւն տալու կապիտալիստական յարաճուն պահանջին՝ մարդկային մսի համար։

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԶՄԱՑՆՈՒՄ Է ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԹԻՒԸ

Թէ պրոլետարիատի թիւը յարատեւօրէն աճում է Միացեալ Նահանգներում՝(1) դա այնպիսի մի շօշափելի փաստ է, որ այլ ևս չեն ժխտում նոյն իսկ նրանք, որոնք ուզում են մեզ հաւատացնել թէ այսօրուայ ընկերութիւնը հանգչում է այն հիմունքների վրայ, ինչ որ սրանից հարիւր տարի առաջ էր, և որոնք փորձում են վարդի գոյնով նկարագրել փոքր արտադրողի դրութիւնը դեռ այսօր էլ։ Արդարեւ, ընկերութեան կազմակերպութեան մէջ յեղաշրջումն է տեղի ունեցել, ինչպէս եղած է արտադրութեան սիստէմի մէջ։ Արտադրութեան կապիտալիստական ձեւը տապալեց բոլոր միւս ձեւերը և ինքը դարձաւ տիրապետողը ճարտարագործութեան դաշտի մէջ, ինչպէս որ այսօր վարձագնով աշխատութիւնն է աշխատանքի տիրապետող ձեւը։ Հարիւր տարի առաջ ագարակապան գիւղացիները առաջին տեղն էին բռնում. յետոյ քաղաքացի փոքր ճարտարագործները. իսկ այսօր վարձագնով աշխատողները կամ պրոլետարիատը։

Բոլոր քաղաքակիրթ երկրներում պրոլետարները, այսօր, ամենաստուար դասակարգն են կազմում. պրոլետարների դրութիւնը և նրանց մտածմունքի եղանակն է որ տիրապետում է աշխատանքի միւս բոլոր ստորաբաժանումների վրայ։ Իրերի այս դրութիւնը բովանդակում է կատարեալ մի յեղափոխութիւն ազգաբնակչութեան մեծամասնութեան մտածմունքի և դրութեան վրայ։ Պրոլետարիատի դրութիւնը արմատապէս տարբերւում է աշխատանքի նախկին դրութիւնից։ Փոքր ագարակապանը, արհեստաւորը, փոքր արտադրողը ընդհանրապէս տէր էին իրենց սեպհական արտադրածին, որովհետեւ տէր էին արտադրութեան միջոցներին. ընդհակառակն՝ պրոլետարի աշխատանքի արդիւնքը չի պատկանում իրեն, այլ կապիտալիստին՝ իր աշխատանքի ոյժը գնողին, արտադրութեան անհրաժեշտ գործիքների սեպհականատէրին։ Ճշմարիտ է որ կապիտալիստը վարձագին է տալիս պրոլետարին, բայց այդ վարձագնի արժէքը նրա արտադրածի արժէքից շատ վար է։

ՊՐՈԼԵՏԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԱՀԻ ԱՂԲԻՒՐՆ Է

Երբ ճարտարագործութեան (մի անգամ ընդ միշտ ասում ենք որ տնտեսական զարգացման ներկայ շրջանում երկրագործութիւնը նոյնքան ճարտարագործութիւն է, որքան և արտադրութեան մի ուրիշ ճիւղ) մէջ կապիտալիստը ծախու է առնում ա՛յն միակ ապրանքը, որ պրոլետարիատը կարող է վաճառել՝ այսինքն նրա աշխատանքի ոյժը, նա այդպէս անում է, որպէսզի պրոլետարի այդ ոյժից ինքը շահաւոր կերպով օգտուի։ Որքան որ գործաւորը աւելի արտադրի, այնքան էլ աւելի կլինի նրա ամբողջական արտադրածի արժէքը։ Եթէ կապիտալիստը իր գործաւորներին աշխատցնէր միայն այնքան, որ նրանք արտադրէին իրենց վճարուած վարձագների արժէքը, նա շահ չէր անիլ։ Բայց որքան էլ որ կապիտալիստը իրեն յօժարակամ ներկայացնի որպէս «բարերար տանջուող մարդկութեան», սակայն և այնպէս իր կապիտալը միշտ «շահ» է աղաղակում։ Որքան որ գործաւորները իրենց վարձագների արժէքի համար պահանջուած ժամանակից աւելի աշխատեն, այնքան էլ աւելի կլինի իրենց արտադրածի արժէքը. այնքան էլ աւելի կլինի, իրենց վարձագների ծախքերից յետոյ, կապիտալիստին մնացած աւելցուքը, և է՛լ աւելի կլինի շահագործման այն քանակութիւնը, որին որ ենթարկւում են գործաւորները։ Աշխատանքի այս շահագործումը կամ խու-

(1) 1890ի վիճակագրութեան համեմատ՝ դասակարգերի յարաբերական թիւը Ամերիկայի Միացեալ Նահանգների մէջ հետեւեալն է, ըստ «սոցիալիստական օրացոյցի»։

Կապիտալիստ դասակարգ	887,390
Միջին դասակարգ	27,517,472
Պրոֆեսիոնալ դասակարգ	3,777,332
Գործաւոր դասակարգ	34,440,046

զումն իր սահմանը գտնում է միայն գործաւորների համբերութեան և ընդդիմադրութեան այն ոյժերի մէջ, որ նրանք ընդունակ են առաջարկելու իրենց շահագործողներին։

Կապիտալիստական արտադրութեան մէջ կապիտալիստը և վարձագնով աշխատողը միասին չեն գործում, ինչպէս որ ճարտարագործական նախկին շրջաններում գործատէրը և գործաւորն էին անում։ Կապիտալիստը շատ շուտով դառնում է և էապէս մնում է մի վաճառական։ Իր գործունէութիւնը, որքան որ նա կարող է գործունեայ լինել, սահմանափակւում է, ինչպէս մի վաճառականի, շուկայի գործառնութեամբ։ Իր աշխատանքն է, որքան կարելի է արժան գնել հում նիւթը, աշխատանքի ոյժը և ուրիշ անհրաժեշտ բաները ու շրջանառութեան մէջ դնելով՝ աւարտ գտած արտադրութիւնները ինչքան կարելի է թանգ ծախել։ Արտադրութեան դաշտին մէջ՝ նա ոչինչ չի անում բացի գործաւորներից աշխատանքի ամենամեծ քանակութիւն կորզելու՝ որքան կարելի է քիչ վարձագնով, և այդպիսով գործաւորներին ճզմելով դուրս բերելու, ըստ կարելոյն մեծ քանակութեամբ, յաւելեալ արժէքներ։ Իր գործաւորների նկատմամբ նա ո՛չ թէ գործակից ընկեր է, այլ միայն վարձ, շահագործող։ Որքան որ գործաւորները երկար աշխատեն, այնքան էլ աւելի լաւ նրա համար. նա չի յոգնում՝ եթէ աշխատանքի ժամերը անհաչիւ կերպով երկարում են. նա չի վտանգւում, եթէ արտադրութեան մեթոդները սպանիչ են դառնում։ Բոլոր ղեկավարիչ դասակարգերից կապիտալիստը ամենաանհոգն է իր գործաւորների կեանքի ապահովութեան նկատմամբ։ Աշխատանքի ժամերի երկարացումն, տօն օրերի չպահելը, գիշերային աշխատանքի ներմուծումն, խոնաւ և ծայրայեղօրէն տաքցուած գործարանները՝ լի թունաւոր գազերով, ահա սրանք են "այն բարւոքումները, որ արտադրութեան կապիտալիստական եղանակը ներմուծել է գործաւոր դասակարգի օգտին համար"։

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՍՏՈՐԱՑՆՈՒՄ ԵՆ ԳՈՐԾԱՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Մեքենաների ներմուծումը ևս աւելի շատացնում է վտանգը գործաւորների կեանքի դէմ։ Մեքենայական սիստէմը գործաւորին չդթայում է մի հրէշի, որ հսկայական

զօրութեամբ և խելայեղ արագութեամբ մշանջենապէս շարժւում է։ Խնամոտ և խորին ուշադրութիւնը մի՛այն կարող է պաշտպանել գործաւորին, որ նա չբռնուի, չխորտակուի այդպիսի մի մեքենայից։ Որովհետև պաշտպանողական միջոցները դրամ արժեն, ուստի կապիտալիստը այդ միջոցները չի ներմուծում, մինչեւ որ նրան չեն ստիպում այդ անելու։ Խնայողութիւնը կապիտալիստի ամենափառաբանուած առաքինութիւնը լինելով՝ փոքր գործարանի մէջ որքան կարելի է շատ մեքենաներ է զետեղում, տեղ խնայելու դիտումով։ Նրա ի՞նչ հոգը թէ դրանով իր գործաւորների ձեռքերն ու ոտքերը կարող են վտանգուել։ Չէ՞ որ գործաւորները արժան են, իսկ օդասուն, ընդարձակ գործատեղիները՝ սուղ։

Դեռ մի ուրիշ տեսակէտ ևս կայ, որով մեքենաների կապիտալիստական կիրառութիւնը ստորացնում է գործաւոր դասակարգի դրութիւնը։ Դա այն է, որ նախկին գործաւորի գործիքը աւելի արժան էր և շատ քիչ էր ենթարկւում այնպիսի փոփոխութեան, որ այլ ևս օգտակար չէլինէր։ Ուրիշ է մեքենայի նկատմամբ. նախ՝ մեքենան դրամ արժէ, շա՞տ դրամ. երկրորդ՝ եթէ իր սիստէմի մէջ եղած բարւոքման պատճառով մեքենան զրկւում է օգտակարութիւնից, ապա կապիտալիստը փոխանակ շահի կորուստ ունի այդ տեղից։ Դարձեալ, մեքենան անպէտքանում է ոչ միայն գործածութեան, այլև պարապութեան պատճառով։ Բացի դրանից՝ գիտութեան ներմուծումը արտադրութեան մէջ միշտ պատճառ է դառնում նոր գիւտերի և հնարքների, որով յաճախ երբեմն այս, երբեմն այն մեքենան, երբեմն էլ ամբողջ գործարանը միանգամից անընդունակ է դարձնում նորագոյն մեքենաների հետ մրցելու. չնորհիւ այս փոփոխութիւնների ամէն մեքենայ յարատեւ վտանգի մէջ է իր օգտակարութիւնը կորցնելու՝ մաշուելուց առաջ։ Այս հանգամանքը բաւականին հիմունք է, որպէսզի կապիտալիստը որքան կարելի է շուտ և շատ օգտուի գործածութեան մէջ դրած իր նոր մեքենայից։ Ուրիշ խօսքով՝ մեքենաների սիստէմի կապիտալիստական կիրառութիւնը մասնաւոր խթան է, որպէսզի կապիտալիստը որքան կարելի է շատ երկարացնի աշխատութեան ժամերը, առանց ընդհատելու յառաջ վարի արտադրութիւնը, ներմուծի գիշերուան և ցերեկուան փոփոխութիւնների սիս-

տէմը և, հետեւաբար, գիշերային աշխատանքի վատառողջ սիստէմը յարատեւ դարձնի։

Այն ժամանակ, երբ մեքենայական սիստէմը սկսեց զարգանալ, մի քանի գաղափարաբաններ (իդիօլոգ) այնպէս յայտարարեցին թէ Ոսկեդարը մօտեցել էր, մեքենան պիտի ազատէր գործաւորին և նրան ազատ մարդ դարձներ։ Կապիտալիստի ձեռքին մէջ, սակայն, մեքենան ամենազօրաւոր լծակը դարձաւ աւելի ծանրացնելու պրոլետարիատի կրած բեռը ու նրա ստրկացումը և՛ս աւելի անհանդուրժելի դրութեան մէջ դնելու։

Բայց ոչ միայն աշխատանքի ժամերի նկատմամբ է, որ վարձագնով աշխատողի դրութիւնը վատացաւ մեքենաների ներմուծմամբ, այլև նրա դրութիւնը վատացաւ և՛ վարձագնի տեսակէտից։ Պրոլետարը՝ այս օրուայ գործաւորը, սեղանակից չէ կապիտալիստին և չի ապրում նրա հետ միևնոյն տանը մէջ։ Որքան էլ թշուառ լինի գործաւորի տունը, ինչքան էլ ողորմելի լինի նրա ուտելիքը, նոյն իսկ եթէ նա սովամահ էլ լինի, – դարձեալ կապիտալիստի բարեկեցութիւնը չի վրդովուիլ այդ ազէխարշ տեսարանից։ Առաջ՝ վարձագին և սովամահութիւն բառերը հակադիրներ էին. ազատ գործաւորը առաջ սովամահ կարող էր լինել, երբ գործ չունէր, ո՛վ կաշխատէր, վարձագին էլ կոտանար և ուտելու էլ բաւականաչափ բան կուենենար, սովամահութիւնը նրա բաժինը չէր։ Կապիտալիստական արտադրութեան սիստէմին էր վերապահուած այդ երկու հակադիրները — վարձագինը եւ սովամահութիւնը — հոմանիշ դարձնելու եւ սովավարձքն մշտատեւ հաստատութիւն ու ընկերային ներկայ սիստէմի նեցուկն անելու։ (2)

(2) Յայտնի բան է, մեքենաները ոչ այլ ինչ են, եթէ ոչ գործաւորների ստեղծած եւ կապիտալիստների սեպհականացրած յաւելեալ արժէքի մի մասը։ Ի հարկէ հետաքրքիր կլինէր իմանալ թէ այդ յաւելեալ արժէքի ո՛րքան մասը մարմնացել է այդ ահեղ գործիքների մէջ։ Վերջին վիճակագրութեան տուած թուանշաններից երեւում է որ Միացեալ Նահանգներում տարաղագործութեան եւ մեքենայական ճարտարագործութեան մէջ գործածուող մեքենաների, գործիքների և գործեակների դրամական արժէքն էր $ 1,584,000,000 կամ, ուրիշ խօսքով, այդ ճարտարա-

ԳԼՈՒԽ Բ.

ՎԱՐՁԱԳՆԵՐ

Գործաւորների վարձագները երբէք չեն կարող այնքան վեր բարձրանալ, որ անկարելի դարձնէին կապիտալիստին իր գործը յառաջ տանելու և ապրելու, այդպիսի հանգամանքների ներքոյ կապիտալիստը աւելի շահաւէտ կը համարէր իր գործը թողնել։ Հետեւաբար՝ գործաւորների վարձագները երբէք չեն կարող այնքան վեր բարձրանալ, որ հաւասարուէին իրենց արտադրածի արժէքին. վարձագները գործաւորի արտադրածի արժէքից միշտ վար պիտի լինին, որպէսզի աւելցուք, յաւելեալ արժէք մնայ. աւելցուքի, յաւելեալ արժէքի բարգաւաճումն է որ կապիտալիստին մղում է աշխատանքի ուժը գնելու։ Բացայայտ է, հետեւաբար, որ կապիտալիստական սիստէմի մէջ գործաւորների վարձագները երբէք այնքան վեր չեն բարձրանալ, որպէսզի վերջ տրուէր աշխատանքի շահագործմանը։

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԻ ԻԻՐԱՑՐԱԾ ԱՒԵԼՑՈՒՔԻ ՉԱՓԸ

Կապիտալիստ դասակարգի իւրացրած յաւելեալ արժէքը, աւելցուքը աւելի շատ է, քան սովորաբար կար-

գործութեանց մէջ գործածուող ամբողջական կապիտալի մօտաւորապէս 100ին 24ը։ Միւս կողմից տարաղագործ կապիտալիստների զուտ շահը - իրենց բոլոր ծախքերը, հարկերը, վերաշինութեան համար ծախսուածները եւայլն դուրս հանելուց յետոյ – հասած էր մօտաւորապէս $ 1,930,000,000։ Հետեւաբար տարաղագործ և մեքենաների վրայ աշխատող գործաւորները մէկ տարուան մէջ արտադրել են, իրենց սեպհական սնունդից դուրս, գործարանական գնով, զուտ արժէք 346,000,000 դոլար աւելի քան միևնոյն մեքենաների ամբողջական արժէքը, որոնց միջոցով որ նրանք շահագործուել էին և որոնց պատճառով նրանք և նրանց սերունդները ստրկացման մէջ պիտի պահուին՝ մինչեւ որ կապիտալիզմը ջնջուի։

Սոց. Օրացոյց

ծըւում է (3)։ Գործաւորի արտադրած յաւելեալ արժէքը, աւելցուքը ոչ միայն տարաղագործի (Manufacteur) "շահն" է հանում, այլ և ուրիշ շատ գումարներ էլ, որոնք արտադրութեան և փոխանակութեան ծախքերի մէջն են մտնում։ Յաւելեալ արժէքը հանում է, օրինակի համար, տանը վարձքը, փոխառութիւնների տոկոսը, վարձագները, վաճառականի շահը, հարկերը, և։ Այս բոլորը պիտի գոցուի յաւելեալ արժէքով։ Ակներև է որ այդ յաւելեալ արժէքը մեծաքանակ պիտի լինի, եթէ մի գործ "պէտք է վճարուի". գործաւորի շահագործումը շատ մեծ պիտի լինի, եթէ նոյն իսկ վարձագները շատ բարձր լինէին։ Պարզ է, որ գործաւորի վարձագինը երբէք այնքան վեր չի բարձրանալ, որ նոյն իսկ մօտաւորապէս հաւասարուի իր արտադրածի արժէքին։ Ամէն հանգամանքների ներքոյ՝ կապիտալիստական սիստէմի վարձագինը նշանակում է գործաւոր դասակարգի ծայրայեղ շահագործումն։ Անկարելի է այդ շահագործումը ջնջել, առանց նախապէս նոյն այդ սիստէմը ջնջելու (4)։

(3) Միացեալ Նահանգների մարդահամարական իւրաքանչիւր երեք շրջանները (1870, 1880 և 1890) ցոյց տուին որ կապիտալիստ դասակարգը, իր ընտանիքի բոլոր անդամները միասին առնելով — մարդ, կին և երեխաներ — կազմում է ամբողջ ազգաբնակչութեան մի աննշան մասը։ Թէեւ այդ դասակարգը ազգաբնակչութեան հազիւ մէկ հարիւրերորդ տոկոսն է կազմում, բայց իր հարստութեան աճեցումը ահագին է։ Բացի շատ փոքր թիւ բաժնեգներից եւ բաժնետոմսերից, որ իրենց ձեռքին ունին միջակ և պրոֆեսիոնալ դասակարգերը, կապիտալիստների սեպհականութիւնն է բոլոր երկաթուղիները, հեռագրալարերը, նաւային գործը, գրամատները, հանքերը և այն ամբողջ մեծ ճարտարագործութիւնը, որ ընդհանրապէս վարում են մեծ ընկերութիւնները. կապիտալիստ դասակարգն ունի բոլոր մթերանոցները և դիզուած ապրանքների ահագին շտեմարանները, որոնք սպասում են օրը օրին ապրող մանր վաճառականների պահանջին։ Կապիտալիստներին են նաև բոլոր արժէքաւոր գործերը, քաղաքների մէջ եղած գետինները, պալատանման տները, ահագին տարածութեամբ վարելահողերը, որ մշակւում են ագարակապանների ձեռքով, նոյնպէս և գեղարուեստական հաւաքածուները, ճոխ կահ կարասիք, մեծածախ հանդերձեղէններ և։ Վերջերս կապիտալիստ դասակարգը պահանջատէր դարձաւ քաղաքապետութիւնների, Նահանգների և շատ մասնաւոր անձնաւորութիւնների — ագարակապաններ, վաճառականներ, փոքր հողատէրեր եւն. — որոնք պատկանում են միջին դասակարգին։

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԱՐՁԱԳՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՑԱԾՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՏՈՒՄՆ ՈՒՆԻՆ

Սակայն վարձագները երբէք չեն հասնում այն բարձրագոյն կէտին, որին պիտի հասնէին, նոյն իսկ այս հանգամանքների ներքոյ. շատ անգամ վարձագները ամենացածր կէտին մօտիկ են հասնում, քան բարձր։ Վարձագները ամենացածր կէտին հասնում են այն ժամանակ, երբ այլեւս բաւականութիւն չեն տալիս գործաւորի ամենակենսական պէտքերին, երբ ոչ միայն գործաւորը սովամահ է լինում, այլ սովամահ է լինում արագ, երբ այլեւս գործ չկայ։

(4) Վերեւի ցուցակից երեւում է որ 1890 ին Պլուտոկրատիք (կապիտալիստ) դասակարգը, որ ներկայացնում էր Ամերիկայի ազգաբնակչութեան նուազ քան հարիւրին մէկ ու կէսը, իր ձեռքին ունէր ամերիկեան աշխատանքի արտադրած ամբողջ հարստութեան, հարիւրին 64ը։

Միջին դասակարգը, որ կազմում է ազգաբնակչութեան հարիւրին 37½ը, ունի այս երկրի ամբողջ հարստութեան 100ին 24½ը

Պրոֆեսիոնալ դասակարգը, ներկայացնելով ազգաբնակչութեան 100ին 6ը, ամբողջ հարստութեան գրեթէ 100ին 4ն ունի։

Գործաւոր դասակարգը ներկայացնում է ազգաբնակչութեան 100ին 55 մասը, և ունի ամբողջ հարստութեան, մօտաւորապէս, 100ին 4ը։

Դիտողութեան արժանի է և այն, որ գործաւոր դասակարգի ունեցած 100 ին 4 ը, ըստ մեծի մասին բաղկանում է փճացուելիք հարստութիւնից, ինչպէս են գործիքներ, տրնային իրեղէններ, հագնելիք հանդերձեղէններ, որոնք բոլորն էլ միայն գործածութեան արժէք ունին և ոչ թէ փոխանակութեան։

Սոց. Օրացոյց

Վարձագները ճաճուում են այս երկու ծայրայեղութիւնների մէջ, ցածր կէտին են հասած լինում, երբ արդէն գործաւորը իր ամենակենսական պիտոյքներից զրկուած է. որքան որ աշխատանքի վաճառանոցի մէջ ծախու աշխատանքի աւելի մեծ մթերք կայ, այնքան էլ աւելի թեթեւ է գործաւորի ընդդիմադրական ընդունակութիւնը։

Ընդհանրապէս, վարձագները բաւականին բարձր պիտի լինին, որպէսզի գործաւորին աշխատելու վիճակին մէջ պահեն կամ, աւելի ճիշդը խօսելով, վարձագները բաւականին բարձր պիտի լինին, որպէսզի կապիտալիստի համար ապահովեն աշխատանքի ոյժի այն քանակը, որին որ նա կարիք ունի։ Ուրիշ խօսքով՝ վարձագները բաւականին բարձր պիտի լինին, որպէսզի ոչ միայն գործաւորին աշխատելու, այլ և զաւակներ արտադրելու դրութեան մէջ դնեն, որպէսզի այս վերջիններս կարողանային իրենց հօրը փոխարինել։ Այս տեղից հետեւում է, որ ճարտարադործական զարգացումը այնպիսի մի միտում ունի, որ շատ հաճելի է կապիտալիստին, այսինքն. *ցածրացնել գործաւորի կենսական անհրաժեշտութիւնները, որպէսզի նրա վարձագինն էլ այն համեմատութեամբ ցածր լինի։*

ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԻՆ ՄԻՋՈՑ ԵՆ ՏԱԼԻՍ ԿԱՆԱՆՑ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՇԱՀԱԳՈՐԾԵԼՈՒ

Կար մի ժամանակ, երբ վարժութիւնը և ոյժը գործաւորի համար անհրաժեշտ էին։ Սովորելու, աշկերտութեան շրջանը այն ժամանակը երկար էր. մեծացնելն էլ բաւականին ծախքերի էր կարօտում։ Սակայն այժմս աշխատանքի բաժանման և մեքենայական սիստէմի յառաջադիմութիւնը հետզհետէ աւելորդ են դարձնում ոյժը և վարժութիւնը արտադրութեան մէջ, աշխատանքի բաժանման եւ մեքենայականութեան սիստէմի յառաջադիմութիւնը հնարաւորութիւն են տալիս, որ անվարժ և արժան գործաւորները վարժուածների տեղը բռնեն։ Տարաղագործութեան նախկին շրջանների մէջ այս միտումը նշմարելի է, բայց մանկահասակ կանանց և երեխաների – այդ անօգնականներից ամենաանօգնականների շահագործումը – ամբողջական շահագործումը սկսուեցաւ այն ժամանակ, երբ արտադրութեան մէջ մտան մեքենաները։ Այսպիսով մեքենաները մի նոր և զարմանալի յատկութիւն են զարգացնում կապիտալիստի ձեռքի մէջ։

Սկզբներում, վարձագնով աշխատողը բաւականին բարձր վարձագին էր ստանում, և նրանով ծածկում էր թէ իր սեպհական եւ թէ իր ընտանիքի ծախքերը. եւ այդպիսով նա կարողանում էր զաւակներ ունենալ ու իր աշխատանքի ոյժը ուրիշներին կտակել։ Առանց վարուեցողութեան այդպիսի եղանակի, կապիտալիստների ժառանգները շահագործման համար պատրաստի պրոլետարներ չէին գտնել։

Երբ, սակայն, գործաւորի կինը և դեռահաս երեխաները կարող են իրենք իրենց մասին հոգալ, այն ժամանակ գործաւորի վարձագինը ապահովաբար կարելի է վար իջեցնել՝ իր անձնական կարիքներին բաւականութիւն տալու չափ, և այդ անելով՝ կապիտալիստը թարմ աշխատանքի ոյժի մթերքի պակասութիւն չի զգալ։

Բացի դրանից, կանանց եւ երեխաների աշխատանքը յաւելուածական այն առաւելութիւնն է տալիս, որ նրանք մարդկանց չափ ընդդիմադրութիւն չեն ցոյց տալիս եւ գործաւորների շարքերի մէջ նրանց առնելը մեծապէս բազմացնում է վաճառանոցի մէջ ծախու հանուած աշխատանքի քանակութիւնը (5)։

Հետեւաբար, կանանց եւ երեխաների աշխատանքը ոչ միայն իջեցնում է գործաւորի կենսական անհրաժեշտութիւնների բաւականութիւն տալու միջոցները, այլեւ պակասեցնում է նրա ընդդիմադրութիւնը՝ աշխատանքի շուկային մէջ մեծ մթերք յառաջացնելով. չնորհիւ այս երկու հանգամանքների, ահա, կանանց եւ երեխաների աշխատանքը իջեցնում է գործաւորի վարձագինը։

ԳԼՈՒԽ Գ.

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԸՆՏԱՆԻՈՒՐԻ ՎԱՅՐԱՅԵՂՈՒՄԸ

ԿՆՈՋԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՃԱՐՏԱՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ՝ ՔԱՑՔԱՑՈՒՄ Է ԳՈՐԾԱՒՈՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Կնոջ աշխատանքը՝ արտադրութեան գործի մէջ՝ յայտարար նշան է գործաւորի ընտանեկան կեանքի ամբողջա-

---

(5) Միացեալ Նահանգներում 1870ին գործող կանանց թիւն էր 1,645,188։ Այդ թիւը 1890ին բարձրացաւ 3,712,144ի, կը նշանակէ թէ՝ 20 տարուայ ընթացքում, աճումը եղել է 2,066,956։ Սոց. Օրացոյց

կան քայքայմանը, առանց այն փոխարինելու ընտանեկան յարաբերութեան մի այլ աւելի բարձր ձեւով։ Արտադրութեան կապիտալիստական սիստէմը ոչ միայն ընդհանուր կերպով քայքայում է գործաւորի տունը, այլեւ խլում է նրա ընտանեկան կեանքի բոլոր ուրախ կողմերը եւ թողնում է միայն խաւարը, տխուրը։ Կնոջ գործունէութիւնը ճարտարագործական գործերի մէջ, այսօր, նրա համար չի նշանակում ազատութիւն տնային պարտականութիւններից, այլ՝ ընդհակառակը, նրա առաջուան բեռի աւելի ծանրացումն։ Բայց մենք չենք կարող երկու տիրոջ ծառայել։ Գործաւորի տունը վնասւում է, երբ իր կինը ստիպւում է օգնել օրական հացը ճարելուն համար։ Ներկայ ընկերութիւնը իր քանդած անհատական տան եւ ընտանիքի տեղը դնում է արգանակատներ եւ ցերեկուայ ապաստանարաններ, ուր տարին դասակարգերին նեռւում են հարուստների փիլիքական եւ մտաւոր սնունդի աւելացած փչրանքները։

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՋԱՆՔ Է ԱՆՈՒՄ ԲԱՆԴԵԼՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ

Սոցիալիստներին մեղադրում են, իբրեւ թէ նրանք իրք ունին ընտանիքը քանդելու։ Մենք գիտենք՝ որ արտադրութեան ամէն միջոց ունեցել է ընտանիքի մասնաւոր ձեւ, որին համապատասխանել է ընտանեկան յարաբերութեան մի մասնաւոր սիստէմ։ Ներկայումս գոյութիւն ունեցող ընտանեկան ձեւը մենք չենք համարում որպէս ամենաբարձրը եւ ո՛չ էլ վերջնականը. մենք ակնկալում ենք որ ընկերային նոր եւ բարւոքուած մի սիստէմ դեռ կարող է զարգացնել ընտանեկան յարաբերութեան մի նոր եւ աւելի բարձր ձեւ։ Բայց այս հայեացքը ունենալը շատ տարբեր է ընտանեկան բոլոր կապերը լուծելու ջանքից։ Նրանք՝ որոնք իրք քանդում են ընտանեկան կապերը – որոնք ոչ միայն ցանկութիւն ունին քանդելու, այլ իրականօրէն քանդում են՝ ուղղակի մեր աչքին առաջ – ոչ թէ սոցիալիստներն են, այլ իրենք կապիտալիստները։ Սրանից առաջ շատ տարկատէրեր ամուսնուն բաժանել էին կնոջից, ծնողները՝ չափահաս զաւակներից. բայց կապիտալիստները տարկութեան նողկանքներից աւելի առաջ գնացին. նրանք ծծկեր մանկանը իր մօրից բաժանեցին եւ ստիպեցին մօրը, որ իր կաթնակերին օտար ձեռքերի մէջը նե

տի։ Եւ մի ընկերութիւն, որի մէջ ամէն օր հարիւր հազար այսպիսի դէպքեր են պատահում, մի ընկերութիւն, որի "բարեգործական" հաստատութիւնները նպատակ ունին աւելի դիւրացնելու մօր բաժանումը իր ծծկեր զաւակներից, դեռ այդպիսի մի ընկերութիւն աներեսութիւն ունի մեղադրելու սոցիալիստներին՝ իբրեւ քայքայողներ ընտանիքի, եւ այդ էլ միայն նրա համար, որ սոցիալիստները իրենց կարծիքը հիմնում են այն իրողութեան վրայ, թէ "ընտանիքը" միշտ եղել է արտադրութեան սիստէմի անդրադարձներից մէկը, եւ նրանք կանխատեսում են, որ արտադրութեան սիստէմի ապագայ փոփոխութիւններից պիտի յառաջանայ ընտանեկան յարաբերութեան մի ուրիշ աւելի կատարեալ սիստէմ (7)։

ԳԼՈՒԽ Դ.

ԸՆԴՀԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ՍԻՍՏԷՄԸ ՄՂՈՒՄ Է ԴԷՊԻ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ընտանեկան կապերի մասին եղած մեղադրութեան հետ սոցիալիստներին մեղադրում են և՛ այն բանի համար, որ նրանք, իբրեւ թէ, ձգտում են կանանց համայնութեան, բոլորին պատկանելուն։ Այս ամբաստանութիւնը նոյնքան սխալ է, որքան եւ առաջինը։ Ընդհակառակը՝ սոցիալիստները կանանց համայնութեան ճիշդ հակառակ կողմն են պաշտպանում, ինչպէս եւ դէմ են սեռական ամէն տեսակ պաշտպանում, ինչպէս եւ դէմ են սեռական ամէն տեսակ ճնշումի ու չափազանց սանձարձակութեան, այսինքն՝ Սոցիալիստ Հանրավարութեան մէջ ամուսնական յարաբերութեանց հիմունքը կը լինի իդէալական սէրը եւ մաքուր

(7) Միացեալ Նահանգներում, 1896ին, 5-18 տարեկան դպրոցական երեխաների թիւը եղել է 20,865,000։ Միջին հաշուով դպրոց յաճախել են միայն 9,747,000ը, կամ 100ին 46,7ը։ Դպրոցական տարին ամբողջ Միացեալ Նահանգների համար եղած է 140 օր։ Այս տեղից պարզ կարելի է եզրակացնել որ տգիտութիւնը մեծ աստիճանով տարածւում է Միացեալ Նահանգներում եւ վերեւ յիշուած տարիքի մէջ գտնուող պատանիները տարուայ մեծ մասը գործում են հանքերի եւ ուղեղ ցամքեցնող աշխատութիւնների մէջ եւ այդպիսիների թիւը՝ հաւանականօրէն՝ 5,000,000ից աւելի է։

սերը կարող է գոյութիւն ունենալ միայն ընկերային այդ-պիսի սիստէմի մէջ։ Դրա հակառակը՝ ի՞նչ ենք տեսնում կապիտալիստների կողմում։

Նորագոյն արտադրութեան անբանաւոր սիստէմը բաժան բաժան է անում սեռերին։ Այդ սիստէմը կին քաղաքներ (she-towns) է կառուցանում Նոր Անգլիայում եւ այր-քաղաքներ (he-towns)՝ Պենսիլուանիայի, Իլլինոյիզի, Օհայոյի հանքային շրջաններում եւ Արեւմտեան հեռաւոր նահանգներում, ու այդ եղանակով ուղղակի խրախուսում եւ թելադրում է անբարոյականութիւնը՝ որպէս մի բնական ու անխուսափելի հետեւանք։ Բացի դրանից՝ անօգնական կիները, որ ստիպուած են իրենց ապրուստը հայթայթել գործարանների, խանութների եւ հանքերի մէջ աշխատելով, կապիտալիստի ընչաքաղցութեան որսն են դառնում, կապիտալիստը օգտուելով կանանց անփորձառութիւնից, իրենց գոյութիւնը պահելուց շատ նուազ վարձատիր է առաջարկում նրանց, եւ դրանով ակնարկում է կամ նոյն իսկ աներեսաբար մատնանիշում է նրանց՝ անբարոյականութեան դիմելու, որպէս մի միջոցի իրենց եկամուտը աւելացնելու։ (8)

Այն ամէն տեղ՝ ուր ճարտարագործութեան մէջ աշխատող կանանց թիւը շատ է, շատ է նաեւ անբարոյականութիւնը։ Նորագոյն Պետութեան մէջ՝ ուր քարոզւում է քրիստոնէութիւնը եւ բարեպաշտութիւնը յարգանք է վայելում՝ ճարտարագործութեան շատ «բարգաւաճ» ճիւղեր

(8) Թէ ինչու համար այդ դառն իրականութիւնը, այդ բանը հասկանալու համար՝ պէտք է միայն նկատողութեան առնել այն ամենաչնչին վարձատրները որ ստանում են գործաւորուհիների մեծ մասը. որովհետեւ ստացուած այդ վարձերով երբէք չի կարելի ապրել, ուստի նրանք ստիպուած են անբարոյականութեան դիմելու, որպէսզի այդ միջոցով յաւելում բերեն իրենց վարձատրների վրան։ Շատ կապիտալիստներ այնքան լպիրշ են, որ վարձատրների ցածութիւնը արդարացնում են՝ մատնանիշելով վարձատրութեան այդ միջոցը։ Այդ է դրութիւնը բիւրաւոր կար անող աղջիկների, դերձակուհիների եւ նորթիկների (մոդիստ), ինչպէս եւ ամէն տեսակ գործարանների մէջ աշխատող կանանց։ (Կինը՝ Անցեալում, Ներկայում եւ Ապագայում, հեղ. Բէբէլի)

կան, որոնց մէջ կանայք այնքան քիչ են վարձատրւում, որ պիտի ստիպուէին սովամահ լինել, եթէ իրենք իրենց անբարոյականութեան տուած չլինէին եւ, որ զարմանալին է, այդպիսի պարագաներում կապիտալիստը յաճախ կըրկնում է, որ փոքր վարձագները անհրաժեշտ են, որպէսզի ինքը կարող լինի յաջողութեամբ մրցել վաճառանոցի մէջ եւ իր հաստատութիւնը «բարգաւաճ» դրութեան մէջ պահի։ (9)

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՆԵՐՔՈՒՆ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻ ՍԻՆՆ Է ԴԱՌՆՈՒՄ

Անբարոյականութիւնը նոյնքան հին է, որքան որ հարուստի եւ աղքատի միջեւ եղած հակադրութիւնը։ Մի ժամանակ, սակայն, անբարոյական կանայք միջին դասակարգն էին կազմում մուրացկանների եւ գողերի միջեւ ու լոկ պերճանքի առարկաներ էին եւ նրանց շքացումը երբէք չէր վտանգիլ ընկերութեան գոյութիւնը։ Բայց այսօր գետնախնձորների մէջ ապրող իգական սեռը միայն չէ անբարոյականութեան անձնատուր եղողը, այլ գործող, աշխատող կանայք, որոնք դրամի համար ստիպուած են իրենք իրենց ծախել։ Այս վերջին տեսակ վաճառքը այլ եւս պերճանքի նիւթ չէ, այլ եղած է մէկը այն հիմունքներից, որի վրայ առաջ է գնում ճարտարագործական արտադրութիւնը։ Արտադրութեան կապիտալիստ սիստէմի ներքոյ՝ անբարոյականութիւնը դառնում է ընկերութեան մի սինը։ Ինչ բանի համար որ ընկերային ներկայ սիստէմի պաշտպանները սիալ կեր-

(9) Տարէց տարի գոյութեան կռիւը աւելի ու աւելի վայրագ բնաւորութիւն ստանալով՝ յաճախ ստիպում է մարդկանց եւ կանանց այնպիսի գործեր կատարելու, որոնցից նողկանք կզգային նրանք ուրիշ ժամանակներում։ Օրինակի համար Գերմանիայի Միւնխէն քաղաքում, 1877-ին, ստուգուեցաւ որ ոստիկանութեան հսկողութեան ներքոյ արձանագրուած անբարոյական կանանց 203ը աւուրչէքով աշխատողների եւ արհեստաւորների կանայք էին։ Եւ ո՞րքան ամուսնացած կանայք անօթութիւնից ստիպուած անբարոյականութեան գիրկն են նետւում, առանց ոստիկանական հսկողութեան, մի բան որ մարդկային ամօթի եւ արժանապատուութեան ամէն զգացում ոտքի տակ է տալիս։ (Կինը՝ Անցեալում, Ներկայում եւ Ապագայում)։

կերպով մեղադրում են սոցիալիստներին, նոյն այդ բանի համար հէնց իրենք են յանցաւորները· — կանանց համայնութիւնը կապիտալիստ սիստէմի ընորոշիչ գծերից մէկն է: Արդարեւ, կանանց համայնութեան այս սիստէմը այնքան խոր արմատ է ձգել նորագոյն ընկերութեան մէջ, որ նրա ներկայացուցիչները համաձայնում են յայտարարելով՝ որ անբարոյականութիւնը անհրաժեշտ մի բան է: Նրանք չեն կարողանում հասկանալ, որ պրոլետարիատի ջնջուելով՝ ջնջւում է եւ անբարոյականութիւնը: Նրանք այնքան խորն են ընկղմուած մտաւոր լճացման մէջ, որ ընկերային մի սիստէմ չեն կարող յղանալ առանց կանանց համայնութեան:

Բայց այս էլ թող լաւ հասկացուի, որ կանանց համայնութիւնը ընկերութեան բարձրագոյն խաւերի գիւտ է եւ ոչ թէ պրոլետարիատի: Կանանց համայնութիւնը պրոլետարիատը շահագործելու եղանակներից մէկն է, ճիշդ սոցիալիզմի ասածին հակառակը:

ԳԼՈՒԽ Ե.

ՎԱՐՁԱԳԻՆՈՎ ԱՇԽԱՏՈՂ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ

ԳՈՐԾԱՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒՄ

Արտադրութեան կապիտալիստ սիստէմը վարձագնով իր աշխատողները առաջին անգամ դուրս բերեց ծառայող դասակարգից, սպասաւորներից եւ թշուառներից: Նա այնքան կարիք չունէր կարող որքան որ համբերող, հընդդիմադրող գործաւորների, որոնք տրամադիր լինէին ամենայն խոնարհութեամբ ենթարկուելու մեծ մանարանների եւ հանքերի պահանջներին. իսկ այս վերջինները ապահովութեամբ առաջ կերթային միայն այն ժամանակ, երբ ամէն մէկ գործող, կենդանի կամ մեքենայ, ճշդութեամբ յառաջ կբերէին այն բոլոր շարժումները, որոնց համար որ նրանք նշանակուած էին: Կապիտալիստների ձեռքի տակը եղող գործաւորները այդ բնաւորութեան տէրը լինելով՝ դրա համեմատ էլ կապիտալիստները որոշեցին վարուեցողութեան այն եղանակը, որին որ պիտի ենթարկուէին գործաւորները առ հասարակ: Աշխատանքը, որի աղնուացնող ազդեցութեանը վրայ կապիտալիստ բարոյագէտները եւ անտեսագէտները սիրում են

ներբողներ կարդալ, ոչ թէ պատուի եւ արժանաւորութեան աղբիւր դարձաւ ամբողջ պրոլետարիատի համար, այլ անարգութեան եւ նուաստացումի: Գործաւորների չընդդիմադրելը միջոց տուեց կապիտալիստին անսահման կերպով աշխատանքի ժամերը երկարացնելու: Եթէ կապիտալը չսահմանուի, նա ո՛չ հանգստեան ժամանակ կտայ պրոլետարիատին եւ ոչ էլ ինքնազարգացմամբ պարապելու: Եւ եթէ կապիտալի պահանջների առաջը չառնուի, նա գործաւորին դէպի մահ կվարի:

Եթէ քնելու եւ աշխատելու ժամերի միջեւ մի քիչ հանգիստ է լինում, դա էլ հազիւ բաւականութիւն է տալիս գործաւորի ամենավաղանցուկ զուարճութիւններին եւ միջոց՝ որ նա ոգելից ըմպելիքների շղթին մէջ խեղդի իր թշուառութիւնը...: Մարդկանց եւ կանանց, չափահասների ու երեխաների միասեղ աշխատելը, — որ մտաւորական բարձրագոյն զուարճութեան եւ բարոյական բարձրացման աղբիւր կարող էր լինել բոլորի համար, եթէ առաջ տարուէր բախտաւոր, աղատ եւ խղճամիտ անձանց կողմից, — կապիտալի հանքերում եւ մանարաններում դարձաւ մի թարմ խթան անբարոյացման եւ ջլատող այն ազդեցութիւնների, որոնք ժանտախտի նման տարածուեցան պրոլետարիատի մէջ:

S72 48-66

ԱՇԽԱՏՈՂ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ՍԿԶԲՈՒՄ ԻՐ ԾԱԳՈՒՄԸ ԱՌԵԼ Է ԽՂԻԿՆԵՐԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԻՑ

Այս հանգամանքին պիտի վերագրել այն իրողութիւնը, որ կապիտալիստական մեծ արտադրութեան նախնական օրերում աշխատող պրոլետարիատը հազիւ թէ կարելի լինէր տարբերել խղճիկների թշուառներից: Թէ առաջինը որ աստիճան թաղուել էր ոճրագործութեան, արբեցողութեան, գռեհկութեան եւ աղտեղութեան — ֆիզիքական եւ բարոյական — մէջ, դա ճշդրտորէն երեւում է Ֆրիդերիկ Էնգելսի՝ Գործաւոր "Դասակարգի Դրութիւնը Անգլիայում"՝ դասական երկից, որին դեռ եւ ոչ մի գրուածք գերազանցել է (10): Միացեալ-Նահանգներում աշխատող պը-

(10) Փողոցները յաճախ այնքան նեղ են, որ մարդ կարող է մի տան պատուհանից ոտքը դնելով անցնել հարեւան տան պատուհանը. տները իրարու վրայ այնքան դիզուած են, յարկ յարկի վրայ բարձրացած, որ հազիւ լոյս

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ. ԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՌ-Арм.ССР

բոլշեւարիատը Եւրոպայի իր եղբայրների չափ փորձառութեան դառնութիւններ չունեցաւ։ Շնորհիւ Միացեալ-Նահանգների պայմանների, շնորհիւ այն հանգամանքի, որ շահագործուող դասակարգի սերունդները շատ դանդաղ կերպով բաղմացան այն ժամանակից առաջ, երբ դեռ կապիտալիստական մեծ արտադրութիւնը իր թեւերը չէր բացարել Ամերիկայում, — խղիկների թշուառների համեմատութիւնը Միացեալ-Նահանգներում աշխատող պրոլետարների թւոյն հետ այնքան շատ չէր, ինչպէս Եւրոպայում, որպէսզի պրոլետարներին նուաստացնէր՝ խղիկների թշուառների աստիճանին հասցնելու չափ։ Բայց այնու ամենայնիւ, իր դասակարգային արժանապատուութեամբ զգեցուած՝ աշխատող պրոլետարիատը, համեմատաբար նորագոյն թուականների պատմական մի երեւոյթ է, նոյնիսկ Ամերիկայում։

ԳԼՈՒԽ Զ.

ԳՈՐԾԱՒՈՐ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ

Կապիտալիստ արտադրութեան պատմութեան մէջ կար մի ժամանակ, երբ "պրոլետարիատ" բառը ծայրայեղ նը-

կարող է թափանցել բակը կամ նրբափողոցները։ Քաղաքի այդ մասում ոչ կոյուղի կայ, ոչ ներուրդ եւ ոչ էլ արտաքնոցներ տներին պատկանող։ Հետեւաբար ամէն տեսակ թափթփուք, աղբ եւ առնուազն հինգ հազար անձանց արտաթորում ամէն գիշեր նետւում են փողոցների եւ առուների մէջ։ Այնպէս որ չնայելով փողոցների աւլուելուն, շորցած աղտեղութեանց եւ ապականութեանց այն տեսակ շոգիներ են ստեղծւում, որ ոչ միայն խստիւ վիրաւորում են մարդու տեսութիւնը եւ հոտառութիւնը, այլեւ մեծապէս ազդում բնակիչների առողջութեանը... Աղքատների տները, ընդհանրապէս, աղտոտ են եւ ակներեւ է որ երբէ՛ք էլ չեն մաքրւում։ Այդպիսիների տները յաճախ բաղկանում են մէկ սենեակից, օդափոխութիւնը վատ, ցուրտ, խոնաւ եւ գետնի մակերեւոյթից վար, շատ վատ կերպով կահաւորուած եւ բոլորովին անյարմար բնակութեան համար. իրրեւ անկողին ծառայում է յարդաշեղջը, որի վրայ պառկում են այր եւ կին, երիտասարդ եւ ծեր... մի դժպհի դրութեան մէջ։ (Էնգելսի Գործաւոր Դասակարգի Դրութիւնը Անգլիայում, "Մեծ Քաղաքները" գլխից)։

ուստացման միւք ունէր։ Նոյն իսկ այսօր կան շատ մարդիկ, որոնք այդ միեւնոյն գաղափարը ունին, թէեւ իրենք իրենց ժամանակակից մաքերով տոգորուած են ձեւացնում։ Սակայն դա մտածմունքի մի արգահատելի խառնաշփոթութիւն է։ Առաջին ժամանակներում, որքան որ գործաւոր պրոլետարիատը եւ տնանկ — թշուառները արտաքին համանման շատ նշաններ էին ներկայացնում, այնու ամենայնիւ, նոյնիսկ այն ժամանակները՝ նրանց երկուսի մէջ եղած վիհը շատ խորն էր։

Տնանկները շարունակեցին մնալ էապէս նոյնը՝ պատմական բոլոր շրջաններում եւ ինչ սիստէմի ներքոյ էլ որ երեւան եկան։ Նիւ-Եօրքի, Չիկագոյի, Սան-Ֆրանչիսկոյի կամ մի որեւէ ազգարնակչութեան ուրիշ նորագոյն մեծ կեդրոնի տնանկները շատ դժուար է զանազանել Հին Հռոմի տնանկներից։ Միւս կողմից՝ նորագոյն գործաւոր պրոլետարիատը մի առանձին երեւոյթ է, որ առաջ երբէք չի նշմարուել մարդկային ազգի պատմութեան մէջ։

ՏՆԱՆԿՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾԱՒՈՐ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՄԻՋԵՒ ԵՂԱԾ ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տնանկների և կապիտալիստ արտադրութեան գործաւոր պրոլետարիատի միջեւ այն ահագին և հիմնական տարբերութիւնը կայ, որ առաջինները միշտ եղել են և տակաւին շարունակում են լինել մակաբոյծներ, մինչդեռ վերջինները նորագոյն ընկերութեան գլխաւոր արմատներից մէկն են, — մի արմատ որ զարգանում է, ոչ միայն որպէս գերակշիռ կարեւորութիւն ունեցող, այլ որպէս միակը, որից ընկերութիւնը ստանում է իր ոյժը և օժանդակութիւնը։ Գործաւոր պրոլետարիատը սեպհականազուրկ է, բայց ոչ թէ ողորմութիւն մուրացող մի տարր։ Ոչ թէ ընկերութիւնն է որ պահում է պրոլետարիատին, այլ պրոլետարիատն է, որ իր աշխատանքովը պահում է ընկերութեանը։ Բաւականին ճշմարիտ է այն, որ կապիտալիստ սիստէմի նախնական օրերում՝ գործաւոր պրոլետարիատը ինքն իրեն նկատում էր որպէս անկար — տնանկ (pauper) մի դասակարգ, իսկ իրեն շահագործող կապիտալիստին համարում էր որպէս բարերար, գործ մատակարարող և, հետեւաբար, որպէս հացատուող։ Ցայտնի բան է, նահապետական այս յարաբերութիւնը մեծապէս հաճելի է կապիտալիստներին. վճարուած

վարձագների փոխարէն նրանք տակաւին պահանջում են իրենց գործաւորներից ո՛չ միայն պայմանաւորուած աշխատանք, այլ նաեւ խոնարհութիւն ու երախտագիտութիւն։

Բայց կապիտալիստ սիստէմը երբէք չի կարող շատ յառաջ երթալ, առանց խախտելու սկզբում գոյութիւն ունեցող նահապետական պայմանները։ Որքան էլ որ սարկացած և ագէտ լինին գործաւորները ո՛ր և է ժամանակ, նրանք՝ ուշ կամ կանուխ, հասկանում են որ իրենք են կապիտալիստներին հաց մատակարարողները և ոչ թէ կապիտալիստները իրենց։ Նրանք շատ լաւ իմանում են որ երբ իրենք աղքատ են մնում կամ հետզհետէ աւելի են աղքատանում, ընդհակառակը՝ կապիտալիստը աւելի ու աւելի հարստանում է։ Եւ երբ իրենք հաց են խնդրում կապիտալիստից՝ այդ կարծեցեալ նահապետից, նա քար է առաջարկում։

Գործաւոր պրոլետարները նրանով են տարբերւում տընանկներից. ծառայի ու սպասաւորի դասակարգերից, որ իրենք չեն ապրում շահագործողների կատարած շահագործութեան արդիւնքով. նրանք արտադրութեան նախկին սիստէմների գործաւորներից տարբերւում են նրանով, որ իրենք միասին չեն ապրում և միասին էլ չեն աշխատում իրենց շահագործողների հետ, և բոլոր անձնական կապերն ու յարաբերութիւնները, որ գոյութիւն ունէին առաջ այդ երկուսի միջեւ, ամբողջապէս չքացան ներկայ գործատէրի և գործաւորի միջից։ Այժմեան գործաւորները ապրում են այնպիսի խեղճ բնակարանների կամ խարխուլ տների մէջ, որ նրանց տուն անուն տալը անուանարկութիւն է «տուն» բառի համար, մինչդեռ իրենք են որ պալատներ են կառուցանում իրենց շահագործողների համար. իրենք սովամահ են լինում, մինչդեռ նրանց համար բազմատեսակ խորտիկներ են մատակարարում. իրենք ապրում են մերկ, մինչդեռ թանկագին հանդերձներ են պատրաստում նրանց համար. իրենք աշխատում, յոգնում են՝ մինչեւ որ վայր են ընկնում ուժասպառ, իսկ կապիտալիստին եւ իւրայիններին միջոցներ են տալիս ժամանակը պարապութեան մէջ սպանելու։

ԹԷ ԻՆՉՈՒ ԳՈՐԾԱՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԱՏՈՒՄ ԵՒ ԱՐՀԱՄԱՐՀՈՒՄ Է ՀԱՐՍՏԻՆ

Այս օրուայ գործաւոր եւ հարուստ տարբերի միջեւ եղած հակադրութիւնը շատ տարբեր է նախակապիտալիստական

տական օրերում եղող հարստի եւ խեղճ մարդու միջեւ եղած հակադրութիւնից. ինչպէս նաեւ շատ տարբեր՝ այս օրուայ կապիտալիստի եւ «փոքր մարդու» միջեւ գտնուող հակադրութիւնից։ «Փոքր մարդը» նախանձում է հարուստ մարդուն, աքանչացմամբ է նայում նրա վրայ, որ իր իդէալն է կազմում, եւ նրա օրինակին ինքը կուզէր հետեւիլ. նա ցանկանում է այդ կապիտալիստի տեղը բռնել եւ նրա պէս մի շահագործող դառնալ ու մի բոլէ անգամ չի մտածում տապալելու շահագործման ներկայ սիստէմը։ Գործաւոր պրոլետարիատը, ընդհակառակը, չի նախանձում արդի հարուստ մարդուն. չի ցանկանում նրա տեղը բռնել. այլ ատում եւ արհամարհում է նրան. ատում է նրան՝ որպէս շահագործող. արհամարհում է նրան՝ որպէս պորտաբոյծ։ Առաջին անգամ գործաւոր դասակարգը ատում է միայն այն կապիտալիստներին, որոնց հետ ինքը ուղղակի յարաբերութեան մէջ է, բայց նա չուտով ըմբռնում է այն իրողութիւնը թէ նրանք բոլորն էլ նոյն դիրքը ունին դէպի իրեն, ուստի եւ իր ատելութիւնը, որ առաջ անձնական էր, զարգանում, դառնում է գիտակցական թշնամութիւն դէպի ամբողջ կապիտալիստ դասակարգը։

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՏԵԼՈՒԹԻՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԱՐԴԻՒՆՔ Չէ

Աշխատող պրոլետարիատի գլխաւոր նշաններից մէկն է՝ թշնամութիւն դէպի շահագործումն։ Դասակարգային այս ատելութիւնը երբէք հետեւանք չէ սոցիալիստ պրոպագանդայի. նա նշմարուել է դեռ շատ ժամանակ առաջ, երբ սոցիալիզմի ազդեցութիւնը տակաւին զգալի չէր եղել՝ գործաւորների մէջ։ Ընկերային նախնական սիստէմի ներքոյ՝ գործաւորների մէջ անկարելի էր դասակարգային այնպիսի լաւ զարգացած ատելութիւն, ինչ որ հիմա է. անձնական սերտ յարաբերութիւնները՝ որ գոյութիւն ունէին նրանց եւ իրենց «վարպետներ»ի (տէրերի) միջեւ՝ դասակարգային այդպիսի հակակրութեան ամէն միտք վտարում էին. վարպետի եւ իր ստորադասեալ անձնաւորութեանց մէջ թշնամութիւններ յաճախ կարող էին պատահել, եւ պատահում էին, բայց դա մի յայտնի աստիճանից այն կողմը չէր կարող անցնել, առանց իսկոյն եւ եթ արտադրութիւնը դադրեցնելու. եւ այդ թշնամութիւնները ինչ կէտի էլ

որ հասնէին, հետեւանքը միշտ հաշտութիւն էր լինում։ Սակայն կապիտալիստ սիստէմի ներքոյ՝ գործաւորները կարող են ամենախիստ թշնամութիւն տածել դէպի իրենց գործատէրը, առանց որ արտադրութիւնը որ եւ է չափով դրանից վնասուէր եւ առանց որ այդ մասին գործատէրը որ եւ է բան գիտենար։

Դասակարգային այս ատելութիւնը առաջին անգամ արտայայտուեցաւ երկչոտ կերպով եւ կղզիացած օրինակներով։ Եթէ բաւականին ժամանակ էր հարկաւոր որ գործաւոր պրոլետարիատը հասկանար՝ թէ մեծահոգութիւնը վերջին բանն է որ գործատիրոջը մղում է իրեն գործ տալու, ապա շատ աւելի երկար ժամանակ պէտք էր որ նա սիրտ առնէր և իր «վերակեցու»ի (բոս) հետ բացայայտ ընդհարումի մէջ մտնէր։ (11)

Տնանկ-աղքատները վատեր են եւ նուաստներ. նրանք զգում են որ իրենք աւելորդ են եւ գիտեն որ նիւթական ո՛եւ է այժ չեն ներկայացնում։ Աշխատող պրոլետարիատն էլ սկզբում այդ միեւնոյն բնորոշիչ գծերն ունէր։ Նա իր հետ եղած վատ վարուեցողութեան քէնը թէեւ պահում էր՝ բայց բողոքում էր լռելեայն, նա սեղմում էր բռունցքները իր գրպանների մէջ եւ հետեւանքը այն էր լինում, որ սրտմտութիւնը ինքն իրան դուրս էր թափում, — ինչպէս որ, դժբախտաբար, այդ միեւնոյնն է լինում, դէս ու դէն, դեռ

(11) Նահապետական յարաբերութիւնը կեղծաւորաբար էր ծածկում գործաւորի ստրկութիւնը, այդ դրութեան մէջ գործաւորը մտաւորապէս մի զէրո, մի պարզ անհատ և բոլորովին անգէտ պիտի մնար իր սեպհական շահերին։ Սակայն երբ նա հեռացաւ իր գործատիրոջից, երբ համոզուեցաւ որ գործաւորի և գործատիրոջ միջեւ եղած միայնակ կապը դրամական շահի կապն է, երբ նրանց մէջ եղած զգացական կապը՝ որ ամենափոքր քննութեան իսկ չէր դիմանալ՝ բոլորովին լուծուեցաւ, գործաւորը ա՛յն ժամանակը միայն սկսեց ճանաչել իր սեպհական շահերը և անկախօրէն զարգանալ. նա միայն ա՛յն ժամանակը դադրեցաւ բուրժուազիայի ստրուկը լինելուց՝ իր մտածմունքներով, զգացումներով եւ կամքի արտայայտութեամբ։ Իսկայս նը-պատակին մեծապէս նպաստեց տարաղադրութիւնը, մանաւանդ մեծ քաղաքների մէջ։ (Գործաւոր Դասակարգի Դրութիւնը Անգլիայում, էջ 123)։

Հզարգացածների մէջ — եւ յառաջացնում էր անդուսպ կըրքերի արդիւնք եղող գործեր եւ ծածուկ ոճիրներ։

Գիտակցական այժի եւ ընդդիմադրութեան ոգու զգացումը ինքնին ծաւալեցաւ գործաւոր պրոլետարիատի մէջ միայն ա՛յն ժամանակ, երբ նա հասաւ այն հասկացողութեան թէ իր անդամներին եւ շարքերին իրարու հետ կապողը շահերի համայնութիւնը եւ համերաշխութիւնն է։ Գործաւոր պրոլետարիատի բարոյական նոր ծնունդը սկսում է համերաշխութեան զգացումի ծնունդովը եւ այդ ժամանակից էլ սկիզբն է առնում իր բարձրացումը այն ճահիճից, որի մէջ ինքը սկզբում ընկղմուած էր՝ տնանկի հետ միասին (12)։

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԱՆԳԻՏԱԿՑՕՐԷՆ ԿՐԹՈՒՄ Է ԳՈՐԾԱՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻՆ ԱՑՆ ՄԷԹՈՏՆԵՐԻ ՄԷՋ, ԻՆՉ ՈՐ ՊԱՀԱՆՋԻՈՒՄ Է ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՏԱՊԱԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կապիտալիստ սիստէմի ներքոյ կատարուող աշխատանքի պայմանները իրենք մատնանիշում են պրոլետարիատին անհրաժեշտութիւնը, որ նրանք ամուր կերպով միատեղ կանգնին, շարժուին որպէս մի մարմին եւ անհատը ստորադասեն ամբողջին։ Մինչդեռ ձեռնարուեստի դասական օրերում ամէն անհատ ինքն էր արտադրում մի ամբողջ ապրանք՝ վաճառք։ Ընդհակառակը՝ կապիտալիստ ճարտարագործութիւնը հիմնուած է գործակցական աշխատանքի վրայ։ Կապիտալիստ ճարտարագործութեան մէջ անհատ գործաւորը ոչինչ չի կարող անել՝ առանց իր գործակից ընկե-

(12) Եթէ աղգարնակութեան կեդրոնացումը դրդում ու զարգացնում է սեպհականատէր դասակարգին, ապա այդ միեւնոյնը եւ՛ս աւելի արագօրէն նպաստում է գործաւորների զարգացմանը։ Գործաւորները սկսում են զգալ որպէս դասակարգ, որպէս ամբողջութիւն և նկատել որ թէև իրրեւ անհատներ իրենք թոյլ են, բայց միացած՝ այժ են. նրանց բաժանումը բուրժուազիայից յառաջացնում է մասնաւոր այնպիսի հայեացքներ, որոնք առանձնայատուկ են գործաւորների կեանքին, այնուհետեւ արթնանում է կրած ճնշման գիտակցութիւնը և գործաւորները ձեռք են բերում ընկերային ու քաղաքական կարեւորութիւն։ (Գործաւոր Դասակարգի Դրութիւնը Անգլիայում, էջ 122)։

ղոջը։ Եթէ գործաւորները սկսեն գործել միացած եւ մի որոշ յատակագծով՝ ապա իւրաքանչիւրի ընդունակութիւնը կը կրկնապատկուի եւ կեռապատկուի։ Այսպիսով՝ միացած աշխատութիւնը ինքնին միութեան ոյժ է պտղաբերում եւ նրանց մէջ զարգացնում յօժարակամ և ուրախալիր կարգապահութեան զգացմունքը — որոնցից երկուսն էլ նախընթաց անհրաժեշտ պայմաններ են գործաւոր դասակարգի համար՝ սոցիալիստական արտադրութեան տիրապետելուց առաջ. ինչպէս եւ երկուսն էլ անհրաժեշտ պայմաններ են, որպէսզի պրոլետարը յաջողութեամբ իր մարմը մղի կապիտալիստական շահագործման ներկայ սիստէմի դէմ։ Եւ այսպէս, իրերի բերմունքով՝ կապիտալիզմը ինքնին կրթում է պրոլետարներին այն մէթոդների մէջ, ինչ որ պահանջւում է իրեն տապալելու համար եւ նրանց դաստիարակում է աշխատանքի մի սիստէմի համար, որ իրենցից կը պահանջուի սոցիալիստ ընկերութեան մէջ։

Աշխատանքի գործակցութիւնից, գուցէ, աւելի զօրաւոր կերպով գործի ներկայ պայմանների հաւասարութիւնն է, որ ձգտում է համերաշխել պրոլետարիատին։ Կատարելագործուած նորագոյն մի մանարանի մէջ՝ գործաւորների միջեւ ո՛չ կարգի և ո՛չ էլ աստիճանաւորումի տարբերութիւն կայ։ Բարձր պաշտօնները, սովորաբար, անմատչելի են պրոլետարներին, յամենայն դէպս այդ տեսակ պաշտօնները այնքան քիչ են, որ բնաւ չեն կարող ազդեցութիւն ունենալ գործաւորական զանգուածի վրան։ Շատ աննշան է թիւը այնպիսի գործաւորների, որոնք կարող են կաշառուել այդպիսի նպաստաւոր պայմաններից։ Գործաւորների մեծամասնութիւնը աշխատանքի համանման դրութիւն ունի. անհատի համար ո՛չ մի կարելիութիւն չկայ ինքնին միայնակ վեր բարձրանալու. նա կարող է իր դրութիւնը բարւոքել միայն ա՛յն ժամանակ, երբ կը բարւոքուի իր աշխատող ընկերակիցների դրութիւնը։ Կապիտալիստը հասկանում է այդ իրողութիւնը և տեսնում նրա գործած ազդեցութիւնը իր մարդկանց վրան. ուստի փորձում է դրանց առաջն առնել՝ արուեստական տարբերութիւններ ներմուծելով իր մանարանների մէջ, որպէսզի այդպիսով երկպառակութեան խնձոր նետի գործաւորների մէջ. բայց նորագոյն մեծ արտադրութեան հաւասարեցնող ազդեցութիւնը և ուժը այն տեսակ է, որ այդպիսի ծրագրեր անկարող են

ամէն ժամանակ քանդել համերաշխութեան այն զգացմունքը, որ գոյութիւն ունի աշխատող պրոլետարիատի շարքերի մէջ։ Որքան որ արտադրութեան կապիտալիստ սիստէմը երկար տեւի, այնքան աւելի ուժեղ կերպով կարտայայտուի պրոլետարիատի համերաշխութիւնը, այնքան աւելի զօրաւոր արմատներ կարձակի այդ համերաշխութիւնը և աշխատող պրոլետարիատի բնաւորութեան գերազանց մէկ մասը կդառնայ։

Տնանկ-աղքատների, սպասաւորների մէջ համերաշխութեան մտածմունք իսկ չէր կարող լինել։ Հին աւատական և Արհեստակցական-Ընկերութիւնների (Համքեարութիւն, guild) ժամանակն էր, որ գործակից-ընկերների (compagnon, journyman) միջից առաջին անգամ ծնուեց շահագործուող դասակարգի համերաշխութիւնը՝ ընդդէմ շահագործողների. բայց աշխատող նորագոյն պրոլետարիատի համերաշխութիւնը աւելի մեծ քայլերով յառաջ է գնացել, քան արտադրութեան նախկին սիստէմի ներքոյ շահագործուող դասակարգի համերաշխութիւնը։ Ոչ հին և ոչ էլ նոր ժամանակի համերաշխութիւնները սահմանափակուեցան միայն մէկ և միևնոյն տեսակ ճարտարագործութեան սահմանների մէջ. ինչպէս որ նորագոյն աշխատող պրոլետարիատը, նոյնպէս էլ Արհեստակցական-Ընկերութիւնների (Համքեարութիւն) օրերում եղող սկզբնատիպերը կամաց կամաց հասկացան ա՛յն իրողութիւնը, որ գործաւորը ամէն տեղ բաղխում է նոյնատիպ հակառակորդի և ամէն տեղ էլ միևնոյն շահերն ունի։ Գործակից-ընկերոջ հաստատած ազգային հին կազմակերպութիւնները անհրաժեշտօրէն սահմանափակ էին, որովհետեւ Պետութիւնը կամ Ազգը, այն ժամանակ, դեռ մի անկատար յղացումն էր։ Նորագոյն գործաւոր պրոլետարիատը միայն ազգայնապէս կազմակերպուած չէ, այլ նա իր հիմունքները շատ աւելի է ընդարձակել. ազգերի մէջ եղած բոլոր պատերազմներին եւ թշնամութիւններին հակառակ, նա՝ պրոլետարիատը կազմակերպուել է միջազգայնապէս. բոլոր երկրների գործաւոր պրոլետարիատները միացած են։

ԱՒԱՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՆԵՐՔՈՋ ԵՂՈՂ ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ ԵՂԱԾ ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Միջազգային կազմակերպութիւնների սկզբնաւորութիւններ արդէն կարելի է դտնել ընկեր — գործաւորների

(համքեարական) սկզբնական օրերում։ Այդ օրերի շահագործուող դասակարգերը ցոյց տուին որ իրենք ընդունակ էին ազգային սահմաններից վեր բարձրանալ. բայց մի սահման, մի պատուար կար, որից նրանք վեր չէին կարող բարձրանալ — դա իրենց սեպհական Արհեստակիցների Ընկերութիւնն էր։ Մի երկրի գլխարկագործ, օրինակի համար, իրեն համաչափ էր զգում ուրիշ երկրների գլխարկագործների հետ, սակայն իր երկրի կօշկակարները. դերձակները եւ ուրիշ գործաւորները իրեն համար օտարականներ էին համարւում։ Այդ ժամանակ զանազան Արհեստակցական - Ընկերութիւններ սուր գծերով էին իրարուց բաժանուած։ Գործակից-ընկեր դառնալուց առաջ՝ գործաւորութեան մբանել ուզողը երկար ժամանակ աշկերտութեան մէջ պիտի մնար եւ իր ամբողջ կեանքում հաւատարիմ պիտի լինէր իր պատկանած ընկերութեանը։ Իր արհեստի ընկերութեան ոյժը եւ բարգաւաճումն՝ իր սեպհականն էր. թէեւ գործակից-ընկերոջ շահերը, յայտնի ասու	եան, հակառակ էին իր արհեստակից վարպետի շահերին. ինչպէս եւ միւս Արհեստակցական-Ընկերութիւնների վարպետների եւ գործակից - ընկերների շահերին։ Արհեստակցական -Ընկերութիւնների ամենարարգաւաճ ժամանակի տեսարանը այն էր, որ զանազան Արհեստակցական- Ընկերութիւնների գործակից ընկերները կատաղի կռիւ էին մղում միմեանց դէմ։ Արտադրութեան կապիտալիստական սիստէմը, ընդհակառակը, զանազան արհեստներ միասին է բերում եւ նրանց անլոյծ կերպով իրար խառնում։ Կապիտալիստական մի հասատատութեան մէջ տարբեր արհեստի պատկանողները ընդհանրապէս միատեղ են գործում եւ միահազոյն ջանքերով են դիմում դէպի հանրական մի նպատակ։ Բացի դրանից՝ կապիտալիստական սիստէմը միտումն ունի արհեստի զաղափարն անգամ ջընջել արտադրութեան մէջ,— մեքենան աշկերտութեան ժամանակը կարճացնում է մինչեւ մի քանի շաբաթուայ, մի քանի օրուայ, մինչդեռ դրա համար առաջ տարիներ էր պէտք. մեքենան կարելի է դարձնում որ շատ գործաւորներ առանց մեծ դժուարութեան մի զրաղումից միւսն են անցնում. նա յաճախ տեղահան է անում գործաւորներին եւ շատ անգամ էլ գործից նրանց դուրս նետում ու ստիպում ուրիշ գործ փնտռելու։ Գործի, աշխատանքի ազատութիւնը, որ փղշատցիները (բուրժուաները) երկիւղ են

կրում կորցնելու սոցիալիստական ընկերութեան մէջ, դա այնպիսի մի բան է որ իր ամբողջ նշանակութիւնը արդէն կորցրել է ներկայ սիստէմի ներքոյ աշխատող գործաւոր դասակարգի համար։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՆԵՐՔՈՅ ԳՈՐԾԱՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԲՈԼՈՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԸ ԻՐԱՐՈՒ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ԵՆ

Այսպիսի հանգամանքների ներքոյ՝ ներկայ գործաւորի համար շատ դիւրին է բարձր կանգնել այն պատուարներից, որոնց առաջ կանգ առաւ նախկին գործակից-ընկերը։ Հետեւաբար, նորագոյն աշխատաւոր պրոլետարիատի մէջ եղող համերաշխութեան զգացումը ոչ միայն միջազգային է, այլև նա տարածւում է ամբողջ գործաւոր դասակարգի վրան։

Տակաւին միջին դարերում վարձու աշխատանքի բազմաձեւութիւն կար. վարձագնով աշխատողների և նրանց շահագործողների մէջ եղած ընդհարումներն էլ նոր բաներ չեն. բայց երբ կապիտալիստական սիստէմի օրէնքը գործադրութեան մէջ մտաւ, միայն այն ժամանակն է որ վարձագընով աշխատող, կռուող դասակարգի ծնունդը երեւան եկաւ. մի դասակարգ որ գիտակից լինելով իր շահերի համայնութեան՝ մինչեւ անգամ պատրաստ էր ոչ միայն իր անձնական, այլ նոյն իսկ տեղային ու անջատ արհեստների — որքան որ սա շարունակում է գոյութիւն ունենալ— շահերը ստորադասելու իր դասակարգային շահերին՝ իբրեւ ամբողջութիւն։ Միայն մեր դարումն է որ վարձագնով աշխատողների, գործաւոր պրոլետարիատի կռիւները շահագործման դէմ՝ դասակարգային կռուի բնաւորութիւն են ստանում։ Դրա շնորհիւն է որ այս կռիւները միտումն ունին հասնելու աւելի բարձր մի նպատակի, քան գոյութիւն ունեցող սիստէմի այս և այն քննադատելի կէտերը տեղափոխելու. և դրա շնորհիւն է որ Աշխատանքի Շարժումը դարձել է յեղափոխական մի շարժում։

Այս պայմանների ներքոյ՝ գործաւոր դասակարգի հորիզոնը յարատեւօրէն ընդլայնանում է։ Դա ճշմարիտ է առաջին անգամ, ամենից աւելի, մեծ արտադրութեանց մէջ աշխատող պրոլետարիատի նկատմամբ. ինչպէս որ կապիտալի ճարտարագործական ձեւը հետզհետէ տիպար

է գառնում բոլոր կապիտալի եւ մինչեւ անգամ տնտեսական բոլոր ձեռնարկներին՝ կապիտալիստ ազգերի մէջ, նը-մանապէս էլ մեծ արտադրութեանց մէջ աշխատող պրոլե-տարիատի մտածմունքները և զգացումները առաջնորդող են վարձագնով աշխատող ամբողջ դասակարգի մտածմունքներին և զգացումներին։ Ինչպէս որ մեծ արտադրութեան ազդեցութիւնը արագօրէն տարածւում է ուրիշ տեսակ ճարտարագործութեանց մէջ, նոյնպէս էլ գործաւորների շարքերը, մէկը միւսից յետոյ՝ գիտակցութիւն են ձեռք բերում, որ իրենց բոլորի շահերը միեւնոյնն են։

Երկրորդ տեղը բռնում են այն գործաւորները, որոնք աշխատում են պարապմունքի ոչ-արտադրող ճիւղերի մէջ, —վաճառականութեան, հաղորդակցութեան, տեղափոխութեան, եւն։ Վերջը գալիս է հողագործութեան մէջ վարձագնով աշխատող պրոլետարիատը, նրանք էլ վերջ ի վերջոյ պիտի հասկանան որ իրենց շահերը նոյնն են օրավարձով աշխատող ուրիշ գործաւորների շահերի հետ, եւ այդ գիտակցութիւնը նրանք այնքան արագ են ձեռք բերում, որքան որ կապիտալիստական մէթոտները աւելի են մուտք գտնում եւ վտարում մինչեւ ցարդ գործադրուած երկրագործութեան նահապետական ձեւերը, և, հետեւարար, անխուսափելիօրէն ագրարական ձեռքերը պիտի ձեւափոխուին եւ դառնան օրավարձով աշխատող պրոլետարներ, որ անձնական ամէն կապ խզած են գործատիրոջ ընտանիքի հետ։ Յառաջադիմութիւնը այս ուղղութեամբ, այս տեսակէտով՝ արդէն նկատելի է։

Այսպէս, գործաւոր դասակարգի բոլոր հատուածները աստիճան առ աստիճան կապւում են իրար հետ եւ բոլորն էլ վառւում են մեծ արտադրութեան մէջ գործող պրոլետարիատի ոգւով։ Յարատեւ կերպով գործաւորական ամբողջ զանգուածը խմորւում է ընկերակցութեան, կարգապահութեան ոգւով եւ դէպի կապիտալիստ դասակարգը տածում է այնպիսի թշնամութիւն, որ առանձնայատուկ է մեծ արտադրութեան մէջ աշխատող գործաւորներին, եւ բացի դրանից, այս յառաջադիմութեան հետ միատեղ, մի անյագ ծարաւ դէպի գիտութիւնը, որ յառաջադիմական պրոլետարների ղեկավարիչ գծերից մէկն է, տոգորում է իրենց դասակարգերի բոլոր շարքերը։

Եւ այսպէս, արհամարհուած, հարստահարուած, անարգուած պրոլետարիատից հետզհետէ ծագում է պատմական մի ոյժ, որի առաջ դողում են գոյութիւն ունեցող բոլոր ուժերը։ Այսպէս, կազմութեան պրոցեսի մէջ է մտած մի դասակարգ, որ իր հետ բերում է բարոյագիտութեան նոր օրէնսգիրք եւ նոր փիլիսոփայութիւն. մի դասակարգ, որ օրէց օր բազմանում է թուով, հոծութեամբ, իր միասնայի գիտակցութեամբ, իմացականութեամբ եւ դառնում է տնտեսական մի անհրաժեշտութիւն։

ԳԼՈՒԽ Է.

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՆ ԲԱՐՁՐԱՑՆՈՂ ԵՒ ՍՏՈՐԱՑՆՈՂ ՀԱԿԱՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Պրոլետարիատի բարձրացումը իր նուաստ դրութիւնից՝ անխուսափելի և բնական մի պրոցես (process, գործողութիւն, ընթացք) է. բայց այդ պրոցեսը ոչ խաղաղ է եւ ոչ էլ միաձեւ։ Կապիտալիստ սիստէմի արտադրութեան միտումներն են գործաւորներին նուաստացնել։ Պրոլետարիատի բարոյական նորածնութիւնը պահանջում է հակամարտանչել այդ միտումների և դրանց նախապատճառ եղող կապիտալիստների դէմ. իսկ այդ կարելի է անել միայն բաւականաչափ զօրեղացնելով այն հակամիտումները, որոնք ծնուած են պրոլետարիատի բանակի նոր պայմաններից, այն պայմաններից՝ որոնց ներքոյ որ գործաւոր դասակարգը շարաչար աշխատում և ապրում է։ Սակայն կապիտալիստ սիստէմի նուաստացնող միտումները տարբեր են զանազան շրջանների, տեղերի և ճարտարագործութիւնների մէջ. ստորացնող այդ միտումները կախում ունին վաճառականի դրութիւնից, զանազան հաստատութիւնների մէջ եղած մրցման չափից, ճարտարագործութեան զանազան ճիւղերի մէջ՝ մեքենայականութեան զարգացման հասած աստիճանից, պարզութեան այն ծաւալից և չափից, որով կապիտալիստները հասկանում են իրենց դասակարգային շահերը, եւն. (13)։ Նոյնպէս և պրոլետարիատի զանազան խաւերի մէջ

---

(13) — Մրցումը, որ ղեկավարում է նորագոյն քաղաքացիական ընկերութիւնը, ամենակատարեալ արտայայտու-

ծաւալուած հակամիտումները բազմաթիւ հանգամանքներից կախումն ունին, նայելով թէ ի՛նչ սովորութիւն և կարիքներ ունի այն ազգաբնակչութիւնը, որի շարքերից որ յառաջ են եկել պրոլետարները. նայելով թէ զանազան ճարտարագործութեանց մէջ ոյժի եւ և վարժութեան ինչ աստիճան է պահանջւում. նայելով թէ կանանց եւ երեխաների աշխատանքը որքան տիրապետող է. նայելով թէ ճարտարագործական պահեստի բանակը ո՛րչափ է, որ շատ տարբեր է զանազան ճարտարագործութեանց մէջ. նայելով թէ գործաւոր դասակարգը ո՛րքան պարզօրէն է ըմբռնում իր դասակարգային շահերը. եւ, վերջապէս, նայելով թէ գործը ի՛նչ բնաւորութիւն ունի. արդեօք նա գործաւորներին կղզիացնո՞ւմ է թէ իրարու մօտ բերում:

Պրոլետարիատի զանազան ճարտարագործութիւնների և ստորաբաժանումների մէջ ունեցած պարագաների այս բազմաթիւ շարքերից իւրաքանչիւրը ոչ միայն մեծապէս փոխւում է, այլ ենթակայ է յարատեւ փոփոխութիւնների՝ չնորհիւ արտադրութեան մէջ եղած տեխնիկական եւ տընտեսական յեղաշրջման անընդհատ ընթացքին: Կապիտալը ամէն օր երկրի մի նոր հատուած է նուաճում և ճարտարագործութեան նոր ճիւղեր էլ իր շահագործմանը ենթարկում. ու այդպիսով ազգաբնակչութիւնից շատերին պրոլետարներ է դարձնում. ամեն օր ճարտարագործութեան նոր ճիւղեր են երեւան գալիս. իսկ արդէն գոյութիւն ունեցածները յեղաշրջւում են: Կապիտալիստ սիստէմի արտադրութեան սկզբում ներկայացած պատկերը այսօր է երեւում: Նոյն իսկ հիմայ ազգաբնակութեան նոր խաւեր շպրտւում են պրոլետարիատ դասակարգի մէջ, ոմանք տնանկ ազքատներից աւելի վար աստիճանի մէջ են ընկնում, ոմանք էլ նորից բարձրանում են եւ ամենաստոր աստիճանի վրայ կանգնում. նոյն իսկ գործաւոր պրոլետարների մէջ յարատեւ կերպով նկատւում է բազմացման եւ նուազման հոսանք. մի մասը բարձրանում է,

թիւնն է ամէնքի կռուի՝ ամէնքի դէմ: Այդ կռիւը, — որ կռիւ է կեանքի, գոյութեան, ամէն բանի համար, հարկաւոր դէպքում կռիւ կեանքի եւ մահուան, — մղւում է ոչ միայն ընկերութեան զանազան դասակարգերի, այլեւ այդ դասակարգերի անհատական անդամների միջեւ: Իւրաքանչիւր ոք արգելք է մի ուրիշին եւ ջանք է անում վտարել իրեն խոչնդոտ եղողներին՝ նրանց տեղը բռնելու համար: Գործաւորները յարատեւ մրցման մէջ են իրարու միջեւ, ինչպէս և բուրժուայի անդամներն էլ՝ իրարու հետ: Շոգեջահրայի վրայ գործող ոստայնանկը մրցում է ձեռա-ջահրայի վրայ գործող ոստայնանկի հետ, անգործ կամ քիչ վարձագին ստացող ձեռա-ջահրայի ոստայնանկը մրցում է գործ ունեցողի կամ լաւ վարձագին ստացողի հետ, ամէն մէկը ճիգ է թափում միւսի տեղը գրաւելու: Գործաւորների այս մրցակցութիւնը ամենավատ ազդեցութիւնը ունի գործաւորների վրայ և ամենաստոր գործիքն է պրոլետարիատի դէմ, որ գտնւում է բուրժուազիայի ձեռքում:

Պրոլետարը անօգնական մէկն է. ինքն իրեն թողնուած՝ նա մի օր իսկ չի կարող ապրել: Բուրժուազիան գոյութեան բոլոր միջոցների մենաշնորհը իր ձեռքն է առել՝ բառի ընդարձակ նշանակութեամբ: Ինչ որ պրոլետարին պէտք է, նա կարող է ստանալ միայն բուրժուազիայից, որ իր մենաշնորհի մէջ հովանաւորում է Պետութեան ուժովը: Հետեւաբար պրոլետարը, թէ՛ օրէնքով եւ թէ՛ իրականութեան մէջ գերին է բուրժուազիայի, որ կարող է նրա կեանքը կամ մահը վճռել: Բուրժուազիան պրոլետարին ապրուստի միջոցներ է առաջարկում միայն նրա աշխատանքի «համար-

ժէքին» համեմատ: Նա նոյն իսկ թոյլ է տալիս որ պրոլետարը ազատ ընտրութեան, ազատօրէն դաշինք կապելու և անրջնազատելի համաձայնութեան երեւոյթն ունենայ, իբրեւ չափահասութեան հասած պատասխանատու մի ազդակ:

Սքանչելի՜ ազատութիւն... երբ պրոլետարը ուրիշ ընտրութիւն չունի, քան ընդունելու բուրժուազիայի իրեն առաջարկած պայմանները կամ սովամահ, ցրտամահ լինելու կամ մերկ, բացօդեայ քնանալու անտառի մէջ՝ անասունների հետ: Սքանչելի՜ համարժէք, որ բուրժուազիան է գնահատում ըստ քմահաճոյս: Եւ եթէ մի պրոլետար այնքան յիմար է, որ կցանկանար աւելի սովամահ լինել քան թէ համաձայնել բուրժուազիայի՝ իր «բնական մեծերի» արդար առաջարկներին, այն ժամանակ մի ուրիշը նրա փոխարէն դիւրութեամբ կգանուէր. աշխարհիս մէջ բաւականին պրոլետարներ կան և բոլորն էլ այնքան անխելք չեն, որ մեռնելը ապրելուց նախընտրեն: (Գործաւոր Դասակարգի Դրութիւնը Անգղիայում»):

միւսը իջնում, նայելով թէ բարձրացնող կամ ստորացնող միտումներից ո՞րն է լինում ժամանակաւորապէս տիրապետողը։

Սակայն, բարեբախտաբար, մարդկային գործի երիտասարդացման համար՝ պրոլետարիատի գլխաւոր խաւերի շընորհիւ, հասած է այն ժամանակը, երբ վճռողական տիրապետութիւն են ստանում բարձրացնող միտումները, եւ նրանք արդէն բաւականին զօրեղ են պրոլետարիատի մէկ կամ միւս հատուածի մէջ արթնցնելու ինքնագիտակցութիւն. գիտակցութիւն իր դասակարգային խորութեան, գիտակցութիւն իր բոլոր անդամների և ամբողջ գործաւոր դասակարգի համերաշխութեան, գիտակցութիւն իր ոյժի, որը յառաջանում է բոլոր գործաւորների սերտ միութիւնից։ Որքան որ պրոլետարիատի որևէ մի մասը շուտ է ձեռք բերում գիտակցութիւնը այն իրողութեան, թէ իր դասակարգը տնտեսական մի անհրաժեշտ տարր է ընկերութեան մէջ. որքան որ ինքնայարգանքի զգացումը աւելի շուտ է ծաւալ առնում իր շարքերի մէջ, որքան որ պրոլետարը շուտ է հասնում այն ըմբռնմանը թէ իր դասակարգի համար փայլուն ապագայ կայ, եւ իր ազատագրութիւնը միայն իրենից կախումն ունի. որքան որ պրոլետարիատի մի մասը շուտ է ճանաչում իր դրութեան գիտակցութիւնը, ինչպէս և իր կոչումը, այնքան էլ նրա ազդեցութիւնը աւելի արագ է թափանցում իր ամբողջ դասակարգի մէջ և այլևս դժուար է լինում նրան յետ ժղել ու այն նուաստ արարածների աստիճանի մէջ դնել, որոնք ընդունակ են միայն ատելու, բայց ոչ թէ միատեղ գալով ընդդիմադրելու մի երկարատեւ պայքարով. որոնք՝ իրենց ապագայից յուսահատուելով՝ աշխատում են իրենց թշուառութիւնը մոռանալ շուայտութեան մէջ. և որոնք չունին ազատամրութեան կենսական ոյժ ու ընդունակ են միայն անարգ հպատակութեան։ Անկարելի է դասակարգային գիտակցութիւնը ջնջել պրոլետարների այն մասի միջից, ուրտեղ որ նա մի անգամ բոյն է դրել։ Կապիտալիստ սիստէմի ստորացնող ազդեցութիւնները որքան էլ որ զգալի կերպով երեւան գան, այնու ամենայնիւ նրանք կարող են միայն տնտեսապէս գետին զարկել իր դասակարգային գիտակցութիւնը ունեցող պրոլետարիատին, բայց երբէք՝ բարոյապէս. պայմանով որ այդ ճնշումը ջախջախիչ չլինի։ Սրա հետ

միասին կայ և այն, որ կապիտալիզմի բերած ճնշումը՝ դասակարգային գիտակցութիւն ունեցող պրոլետարիատի վերայ՝ իր անմիջական ազդեցութիւնը կունենայ հակաճնշման երեւան գալը. և կապիտալիստի այդ ճնշումը չի ստորացընիլ, այլ կը պայքացնի. նա չի նուաստացնիլ պրոլետարիատին և նրան դնիլ տնանկ-աղքատների նախատալից դրութեան մէջ, այլ նրան կբարձրացնի մարտիրոսութեան արժանիքին։

ԳԼՈՒԽ Ը.

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ ՊԱՀԵՍՏԻ ՌԸՆԱԿԸ

ԱՆԳՈՐԾՆԵՐԻ ԲԱՆԱԿԸ ԿԱԶՄԻՈՒՄ Է ՆԵՐԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Մենք տեսանք որ կանանց եւ երեխաների աշխատանքի ներմուծումը ճարտարագործութեան մէջ՝ ամենազօրաւոր միջոցներից մէկն է, որով կապիտալիստները նուազեցնում են գործաւորների վարձատները։ Սակայն մի ուրիշ միջոց էլ կայ, որ թէեւ պարբերական, բայց նոյնքան զօրաւոր է, — դա է գործաւորների ներածումը հարեւան, յետամնաց այնպիսի երկրներից, որոնց ազգաբնակչութիւնը քիչ կարիքներ ունի եւ որոնց աշխատանքի ոյժը դեռ չի թուլացել գործարանական սիստէմից։ Մեծ արտադրութեան եւ մեքենայականութեան զարգացումը ոչ միայն հնարաւոր է դարձնում այդպիսի անվարժ գործաւորներին բանեցնելը՝ վարժուածների փոխարէն, այլեւ կարելի է դարձնում նրանց արժանագին և արագ փոխադրութիւնը՝ ցանկացուած տեղը։ Արտադրութեան զարգացման հետ համընթաց կերպով յառաջ է գնում փոխադրութեան սիստէմը. հսկայական արտադրութեան համապատասխանում է հսկայական փոխադրութիւնը, ոչ միայն ապրանքի, այլեւ անձերի համար եւ։ Շոգենաւերը և երկաթուղիները, քաղաքակրթութեան այդ պանծալի սիւները, ոչ միայն հրացան, խմիչք եւ սիֆիլիս են տանում բարբարոսներին, այլ բարբարոսներին նոյնպէս բերում են մեզ մօտ եւ նրանց հետ միասին էլ՝ նրանց բարբարոսութիւնը։ Երկրագործ մշակների հոսանքը դէպի քաղաքները հետզհետէ մեծ ծաւալ է առնում.

և ամենահեռաւոր երկրներից իրարու մօտ են գալիս այնպիսի խմբեր, որոնք ունին նուազ կարիքներ, աւելի համբերատար են և քիչ ընդդիմադրողներ։ Սլօվակները, Շուէդացիները և Իտալացիները գաղթում են Գերմանիա. Գերմանացիները, Բելգիացիները, Իտալացիները գաղթում են Ֆրանսիա. Սլօվակները, Գերմանացիները, Իտալացիները, Իռլանդացիները, Շուէդացիները գաղթում են Անգլիա. Սլօվակները, Ռուսները, Հայերը, Շուէդացիները, Իտալացիները, Իռլանդացիները, Անգլիացիները և Չինացիները գաղթում են Միացեալ-Նահանգները — բոլորն էլ իւրաքանչիւր տեղի վարձագների ցածրանալուն նպաստելով։ Արտասահմանեան այս բոլոր գործաւորները մասամբ սեպհականազուրկ մարդիկ են, փոքր ագարակապաններ եւ արտադրողներ, որոնց կործանել է արտադրութեան կապիտալիստ սիստէմը, փողոցն է շպրտել եւ զրկել է ոչ միայն իրենց տնից, այլ նաեւ իրենց երկրից։ Փղշտացիները յաճախ մեղադրում են որ հայրենասիրութիւնը պակասում է Սոցիալիզմի մէջ։ Նայեցէ՛ք գաղթականների այդ խմբերին. կապիտալիստը չէ՞ որ այդ թշուառներին սեպհականազրկելով՝ աքսորի թոյնն է նրանց խմել տալիս։

ԱՆԳՈՐԾՆԵՐԻ ԲԱՆԱԿԸ ԿԱԶՄԻՈՒՄ Է ԿԱՆԱՆՑ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Փոքր ագարակապանների և արտադրողների սեպհականազրկման շնորհիւ, հեռաւոր երկրներից մեծ թուով աշխատաւորների ներածման շնորհիւ, կնոջ եւ երեխայի աշխատանքի զարգացման շնորհիւ, արհեստ ձեռք բերելու անհրաժեշտ ժամանակի կարճացման շնորհիւ, այս բոլոր միջոցների շնորհիւ արտադրութեան կապիտալիստ սիստէմը հնարաւորութիւն ունի մեծապէս ստուարացնելու իր արտադրութեան ներքոյ եղող աշխատանքի ոյժերը։ Եւ դրա հետ կողք կողքի յառաջ է գնում մարդկային աշխատանքի արտադրականութեան յարատեւ աճումը, որպէս հետեւանք անընդհատ յառաջադիմութեան՝ տեխնիկական արհեստների մէջ։

ԱՆԳՈՐԾՆԵՐԻ ԲԱՆԱԿԸ ԿԱԶՄԻՈՒՄ Է ՄԵՔԵՆԱՑԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՇՆՈՐՀԻՒ

Այս միտումների հետ միասեղ՝ մեքենան յարատեւօրէն ձգտում է տեղհան անելու գործաւորներին եւ նրանց աւելորդ դարձնելու։ Ամէն մեքենայ աշխատանքի ոյժ է խնայում. եթէ այդ չանէր, ապա նա անօգտակար կլինէր։ Ճարտարագործութեան ամէն ճիւղի մէջ — եւ այս տեղ պէտք է յիշել որ այսօր երկրագործութիւնն էլ ճարտարագործութիւն է եւ համանմանօրէն կրում է մեքենայի ազդեցութիւնը — ձեռքի աշխատանքից դէպի մեքենայի աշխատանքի փոխանցումը իրա հետ բերում է մեծաքանակ տանջանք գործաւորների համար, որոնք մեքենայի պատճառով աւելորդ են դառնում եւ փողոցները նետւում՝ լինին նրանք հասարակ գործաւորներ կամ արհեստաւորներ եւ կամ ագարակագործներ, որոնք հերկում, հնձում եւ բամպակ են քաղահան անում։ Մեքենայականութեան այդ ազդեցութիւնն էր, որ գործաւորները զգացին առաջին անգամ։ 19-րդ դարու առաջին տարիների ընթացքում կատարուած բազմաթիւ խռովութիւնները եւ այսօրուայ յաճախ տեղի ունեցած պատահմունքները ցոյց են տալիս տանջանքի այն քանակութիւնը, որ ձեռքից դէպի մեքենայի աշխատանքի փոխանցումն է բերում, ինչպէս և կատարելագործուած մեքենայականութեան ներմուծումը, որոնցից երկուսն էլ թշուառացնում են գործաւոր դասակարգին և նրան մղում դէպի յուսահատութիւն։ Մեքենայականութեան ներմուծումը, ինչպէս եւ նրա յաջորդական կատարելագործումը, ամէն ժամանակ չարաղէտ է եղել գործաւորների համար։ Ճշմարիտ է որ յայտնի հանգամանքների ներքոյ ուրիշ գործաւորներ կարող են վաստակել դրանով, այնպիսի գործաւորներ, օրինակի համար, որ կղբաղուին նոյն այդ մեքենաները շինելով. բայց նախ այդ բախտաւորները, այսօր, ինչպէս եւ միշտ, շատ քիչ են քան թէ տանջուողները. և երկրորդ՝ շատ կասկածելի է թէ արդեօք այս իրողութեան գիտակցութիւնը ո՞րքան առաջ կարողէ գնալ՝ սովամահ գործաւորներին մխիթարելու համար։

Ամէն մեքենայ նպատակ ունի՝ աւելի քիչ գործաւորներով նո՛յնքան ապրանք արտադրելու, որքան որ առաջ. կամ աւելի մեծ քանակութեամբ ապրանքներ դուրս բերելու, առանց գործաւորների թիւն աւելացնելու։ Այս տեղից հետեւում է, որ եթէ մի երկրում գործաւորների թիւը չի պակասում մեքենայականութեան սիստէմի զարգացմամբ, ապա վաճառանոցը աւելի պիտի ընդարձակուի այդ գործա-

ւորների յարաճուն արտադրականութեան համաձայն։ Սակայն աչքի առաջ ունենալով որ անտեսական զարգացումը աճեցնում է աշխատանքի արտադրականութիւնը, եւ միեւնոյն ժամանակ որ նա մեծ չափով բազմացնում է տրամադրելի աշխատանքի քանակութիւնը, դրանից հետեւում է, որ վաճառականոցը աւելի արագութեամբ պիտի ընդարձակուի, քան թէ մեքենայի պատճառով շատացած աշխատանքի արտադրականութիւնը, որպէսզի այդպիսով արգիլուի բըռնադատուած պարապութիւնը գործաւորների մէջ։ Վաճառականոցի արագ ընդարձակում, սակայն, շատ քիչ անգամ հանդիպեցաւ կապիտալիստ արտադրութեան ժամանակ։ Կապիտալիստների փոստաբանած "ծաւալման" թէորիան անհամաչափ է գտնում այսօր։ Դրանից հետեւում է որ հարկադրուած պարապութիւնը մշտական մի երեւոյթ է կապիտալիստ սիստէմի արտադրութեան ներքոյ և նրանից էլ՝ անբաժան։ Նոյն իսկ ամենալաւ ժամանակները, երբ վաճառականոցը յանկարծ մեծ ընդարձակութիւն է ստանում եւ գործերը շատ են, դարձեալ արտադրութիւնը չէ կարող բոլոր անսակայն, երբ գործերը կանգ են առնում, անգործների թիւը առասպելական չատութեան է բարձրանում։ Իրօք անգործները կազմում են կատարեալ մի բանակ, — ճարտարագործական պահեստի բանակ, ինչպէս որ անուանել է Մարքսը։ Դա աշխատանքի ուժերի մի բանակ է, որ միշտ պատրաստ է գտնում կապիտալիստի տրամադրութեան ներքոյ. մի բանակ՝ ուր տեղից կապիտալիստը միշտ կարող է ստանալ իր պահեստի զինուորները, երբ ճարտարագործական մարտը հրատապ է դառնում։

ԱՆԳՈՐԾՆԵՐԻ ԲԱՆԱԿԻ ԱՐԺԷՔԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ

Կապիտալիստի համար պահեստի այս բանակը շատ թանկագին է։ Նա կապիտալիստի ձեռքը տալիս է մի զօրեղ գործիք, որով սանձում եւ հպատակեցնում է գործ ունեցող գործաւորների բանակին։ Երբ ոմանց ծայրայեղ աշխատանքը արտադրում է գործի պակասութիւն միւսների համար, այն ժամանակ այս վերջիններիս պարապութիւնը գործ է ածւում իբրեւ միջոց՝ պահելու եւ նոյն իսկ աւելացնելու

առաջինների ծայրայեղ աշխատանքը (13)։ Եւ դեռ կան՝ մարդիկ, որոնք ասում են թէ այսօր ամէն ինչ վարդագոյն վիճակ ունի։

Թէեւ ճարտարագործական պահեստի բանակի քանակութիւնը բարձրանում և իջնում է գործերի բարձրանալու և իջնելու հետ միասին, այնու ամենայնիւ, ամէն բան միասին առած, երեւում է որ նա շատանալու յարատեւ միտում ունի։ Դա անխուսափելի է։ Տեխնիքական զար-

(13) Ո՞ւր տեղից է ծագում այս անպատեհութիւնը։ Նա գտնւում է ճարտարագործական մրցման և նրանից յառաջացող վաճառականական տագնապների բնաւորութեան մէջ։ Ապրուստի միջոցների ներկայ անկանոն արտադրութիւնը և բաշխումը որ կատարւում է ոչ թէ կարիքներին ուղղակի բաւականութիւն տալու դիտումով, այլ շահի համար, այդ սիստէմին մէջ, ուր ամէն ոք աշխատում է իր համար եւ իրեն հարստացնելու, խառնաշփոթութիւններ անխուսափելիօրէն պիտի ծագին ամէն ժամանակ։ Օրինակի՞համար՝ Անգղիան շատ երկրների ամէն տեսակ ապրանք է մատակարարում։ Արդ, թէեւ մի տարազագործ կարող է գիտնալ թէ ամէն ապրանքից տարեկան ո՞րքան է սպառւում մի երկրում, բայց չի կարող իմանալ թէ տուած բոպէին ո՞րքան առ ձեռն, պատրաստ կայ, և դրանից էլ աւելի նուազ կարող է իմանալ, թէ իր մրցակիցները ո՞րքան են արտածում այն տեղ։ Նա կարող է միայն գների մշտական ելևէջքից շատ անստոյգ եզրակացութիւններ դուրս բերել՝ ապրանքների պատրաստի քանակութեանց և բոպէի կարիքների մասին։ Նա բախտին միայն պիտի վստահի իր ապրանքները արտածելիս։

Ամէն ինչ կատարւում է կուրօրէն, ենթադրութեան վրայ հիմնուած, աւելի կամ նուազ չափով՝ պատահմունքի քմահաճոյքին թողնուելով։ Ամենաթեթեւ նպաստաւոր տեղեկութիւնը ստանալիս՝ ամէն ոք արտածում է, որքան որ ինքը կարող է, այնպէս որ շատ ժամանակ չանցած՝ ամբողջ վաճառականոցը լեփ լեցուն է դառնում. կապիտալը մնում է անգործ, գները իջնում են եւ անգղիական տարազագործութիւնը այլեւս պարապմունք չունի իր ձեռքերի համար։ (Գործաւոր Դասակարգի Դրութիւնը Անգղիայում, էջ 82)

գացումը յարաճուն երագութեամբ յառաջ է շարժւում և յարատեւօրէն ընդարձակում է իր գործունէութեան դաշտերը, մինչդեռ միւս կողմից, վաճառականների ընդարձակումը պարփակւում է բնական սահմանների մէջ։

Ուրեմն, աշխատանքի պակասութեան լիակատար նշանակութիւնը ի՞նչ է։ Դա նշանակում է ոչ միայն թշուառութիւն և չքաւորութիւն անգործների համար, ոչ միայն խտացած հպատակութիւն և շահագործումն անգործներին. ապա դա նշանակում է անապահովութիւն օրապահիկի՝ ամբողջ գործաւոր դասակարգի համար։

Նախկին շահագործութեան եղանակները ի՛նչ տանջանքների էլ որ ենթարկում էին շահագործուողներին, այնուամենայնիւ նրանք մի շնորհ չէին խլում նրանցից, այն է օրապահիկի ապահովութիւնը։ Ճորտի և ստրուկի ուտելիքը գէ՛թ ապահովուած էր ա՛յնքան ժամանակ, որքան որ ապահովուած էր նրանց տիրոջ կեանքը։ Երբ ա՛էրը կործանւում էր, միայն այն ժամանակն էր որ իրենից կախում ունեցողների կեանքն էլ վտանգւում էր։ Արտադրութեան նախկին սիստէմների ներքոյ՝ աշխատող ժողովրդին ի՛նչքան թշուառութիւն և կարօտութիւն որ հանդիպէր, սակայն այդպիսի պատահմունքները երբէք հետեւանք չէին արտադրութեան, այլ հետեւանք՝ արտադրութեան խառնաշփոթութեան, որ յառաջ էր գալիս հունձքի փչանալուց, երաշտութիւնից, հեղեղներից, թշնամի բանակների արշաւանքներից, և այլն։

Այսօր, շահագործողի և շահագործուողի գոյութիւնը մէկզմէկու հետ չեն կապուած։ Ամէն մի վայրկեան գործաւորը կարող է փողոցը շպրտուիլ իր՝ կնոջ և երեխաների հետ միասին, եւ մատնուիլ դաժան սովամահութեան, առանց որ շահագործողը ամենափոքր չափով դրանից անհանգստութիւն կրէր, ա՛յն շահագործողը, որին որ նա հարստացրել էր։

Այսօր, հարկադրուած պարապութեան թշուառութիւնը շատ բացառիկ հանգամանքներում միայն արտադրութեան մէջ եղած խառնաշփոթութեան հետեւանք է՝ արտաքին ազդեցութիւնների շնորհիւ. այժմս գործաւորների բռնադատուած պարապութիւնը անհրաժեշտ հետեւանք է

միայն ներկայ արտադրութեան սիստէմի զարգացմանը։ Այսօր, նախկին արտադրութեան սիստէմների ներքոյ եղածին բոլորովին հակառակն է հանդիպում։ Այսօր, արտադրութեան մէջ եղած այդպիսի խառնաշփոթութիւններ աւելի շատացնում են աշխատանքի պատահականութիւնները. պատերազմը իր բոլոր կործանարար ազդեցութեանց հետ իր անմիջական հետեւանքն ունի աշխատանքի պահանջի աւելացումն։

Արտադրութեան նախկին սիստէմի ներքոյ, փոքր աստիճանով, գործաւորի հասոյթը համեմատական էր իր աշխատասիրութեան։ Ծուլութիւնը նրան քանդում էր և վերջն էլ գործից դուրս նետում։ Այսօր, ընդհակառակը, գործի պակասութիւնը այնքան շատ կլինի, որքան որ շատ աշխատի գործաւորը. այնպէս որ նա բռնադատուած պարապութիւն է յառաջացնում ինքը իր սեպհական աշխատանքով։ Առաջ ընտանեկան մի առած կար, որ իր ծագումն առած էր փոքր արտադրութեան սիստէմի ժամանակից, եւ որը կապիտալիստ մեծ արտադրութիւնը այժմ բոլորովին հակաշրջել է. այն է թէ՝ «աշխատաւորի տունը չինողը իր աշխատասիրութիւնն է»։ Նմանապէս բոլորովին ստութիւն է այժմ այն առածը՝ թէ «գործել ուզողը միշտ հաց կը գտնի»։

Այսօր գործաւորի համար աշխատանքի ուժակարողութիւնը նոյնքան անվստահելի մի վահան է չքաւորութեան եւ թշուառութեան դէմ, որքան որ սեպհականութիւնը՝ փոքր արտադրողի համար։ Ինչպէս որ մանկացման ուրուականը իր ստուերը ձգում է փոքր ագարակապանի և փոքր ճարտարագործի շաղին վրայ, այնպէս էլ գործազուրկ մնելու ուրուականը մթնացնում է վարձագնով աշխատողի ճանապարհները։ Ամէն չարիքներից մեծը, որ յարակից է արտադրութեան ներկայ սիստէմին, չարիքներից ամենայուզիչը, ամենաաղէխարշը, որ մարդու հոգին սոսկացնում է եւ պահպանողականութեան ամէն զգացում արմատից ցընցում, — դա է օրապահիկի յարատեւ անապահովութիւնը։ Այդ մշտական անապահովութիւնը կտրատում է ամէն յոյս կեանքի ապահովութեան եւ ամէն շահ՝ նրա պահպանութեան համար։

Ծայրայեղ աշխատանք, գործի պակասութիւն, ընտանիքի քայքայումն — սրանք են այն պարգեւները, որ արտ-

տադրութեան կապիտալիստ սիստէմը բերում է պրոլետարիատին, նոյն այն ժամանակ, երբ նա պատճառ է դառնում այդ դասակարգի օրէցօր ստուարանալուն և այդ դրութեան զգալի կերպով հետզհետէ տարածուելուն՝ ամբողջ ազգաբնակութեան վրայ։

ԳԼՈՒԽ Թ.

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՅԵՐԵՎՈՒՍՆ — ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ

Ոչ միայն մեծ արտադրութեան ընդարձակութեան շընորհիւն է, որ կապիտալիստ սիստէմը հետզհետէ ամբողջ ազգաբնակութեանը պրոլետարիատ է դարձնում։ Այդ բանը կատարւում է նաեւ այն հանգամանքի շնորհիւ, որ մեծ արտադրութեան մէջ վարձագնով աշխատող գործաւորների դրութիւնը օրինակելի է դառնում բոլոր միւս ճիւղերի մէջ վարձագնով աշխատող գործաւորների համար։ Այժմ բոլորովին յեղաշրջուած են ա՛յն պայմանները, որոնց ներքոյ որ վերջին տեսակի գործաւորները գործում և ապրում են. սրանց երբեմնի ունեցած առաւելութիւնները կապիտալիստ ճարտարագործութեան մէջ աշխատող գործաւորների վրայ — այժմ բոլորովին աննպաստ հանգամանքների է փոխուել իրենց համար՝ կապիտալիստ ճարտարագործութեան մէջ աշխատող միեւնոյն գործաւորների շնորհիւ։ Օրինակի համար՝ այն տեղերում, ուր գործաւորները գործում են վարպետ-գործաւորի համար՝ նրա հետ միասին աշխատելով եւ ապրելով, կապիտալիստ ճարտարագործութեան մէջ աշխատող գործաւորների ունեցած խեղճ կերակուրը եւ բնակարանը պատրուակ են դառնում նոյն այդ վարպետ-գործաւորի համար, որպէսզի նա իջեցնի իր գործաւորների վայելած բնակարանի եւ ապրուստի յարմարութիւնները։ Դարձեալ. առաջուան ժամանակներում աշկերտութեան համար պահանջուած երկայն շրջանը միջոց էր ապրանքի կուտակուիլը արգիլելու. այսօր աշկերտութեան սիստէմը — որ Ամերիկայի շատ քաղաքների մէջ առաջ է տարուում բարեգործութեան քօղի տակ, Արհեստագիտական-Դպրոցների անունով, օրինակ Նիւ-Եօրքում եւ Փիտսբուրգում — ամենաազդու միջոցներից մէկն է շատ արհեստներ արժանագին աշխատանքով ողողելու և չափահաս աշխատողների բերանից հացը խլելու։ Այդ տեսակէտով նոյնպէս, ինչպէս եւ ուրիշ շատ տեսակէտներով, այդ հաստատութիւնները, որ փոքր արտադրութեան սիստէմի ներքոյ օգտակար եւ նպաստաւոր էին, — ընդհակառակ՝ նա շատանում է։ Փոքր մթերանոցը վերջին ապաստանարանն է սնանկացած փոքր արտադրողի համար։ Եթէ իսկապէս փոքր մթերանոցները մէջտեղից վերցուէին, այն ժամանակ փոքր վաճառականները իրենց ոտքի տակի հողը կը կորցնէին. նրանք այն ժամանակ պրոլետարիատ դասակարգից իսկոյն կընկնէին տնանկ-աղքատների շարքին մէջ. կը դառնային մուրացկաններ, թափառաշրջիկներ եւ զգաստարանի թեկնածուներ։ Այսպէս է իրականութեան մէջ, ամենամեծ չափով, փոքր վաճառականի էվոլիւցիան (բնաշրջում)։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՓՈՔՐ ՄԹԵՐԱՆՈՑՆԵՐԻ ՎՐԱՑ

Մի ուրիշ եւ շատ ընդարձակ ճիւղ կայ, որի վրայ խոշոր արտադրութեան կապիտալիստ սիստէմը գործում է իր ազդեցութիւնը՝ ազգաբնակչութիւնը պրոլետարիատի վերածելով — դա է վաճառականութեան ճիւղը։ Մեծ մթերանոցները սկսել են ծանր կերպով ազդել, և այժմ էլ ազդում են, փոքր մթերանոցների վրայ։ Փոքր մթերանոցների թիւը, հետեւաբար, անհրաժեշտօրէն չի պակասում։ Ընդհակառակը՝ նա շատանում է։ Փոքր մթերանոցը վերջին ապաստանարանն է սնանկացած փոքր արտադրողի համար։ Եթէ իսկապէս փոքր մթերանոցները մէջտեղից վերցուէին, այն ժամանակ փոքր վաճառականները իրենց ոտքի տակի հողը կը կորցնէին. նրանք այն ժամանակ պրոլետարիատ դասակարգից իսկոյն կընկնէին տնանկ-աղքատների շարքին մէջ. կը դառնային մուրացկաններ, թափառաշրջիկներ եւ զգաստարանի թեկնածուներ։ Այսպէս է իրականութեան մէջ, ամենամեծ չափով, փոքր վաճառականի էվոլիւցիան (բնաշրջում)։

Փոքր մթերանոցների թուի նուազեցումն չէ, այլ նրանց բնաւորութեան ստորացումն է, որով մեծ արտադրութեան ազդեցութիւնը արտայայտւում է վաճառականութեան վրայ։ Փոքր վաճառականը միշտ գործ ունի վատ եւ արժանագին ապրանքների հետ. ապրիլմավաճառների թիւը շատանում է. փողոցները եւ պողոտաները լցւում են փերեզակներով, բազմանում է թիւը և՝ շրջիկ մանրավաճառների ու ամէն տեսակ անարժէք հնավաճառների. ուրուած պտուղներ, փչացած բանջարեղէններ եւն. ծախւում են ամենանենգ կերպով, խարդախուած կշիռքների եւ չափերի միջոցով։ Այսպէս, անկախ փոքր վաճառականի օրապա-

հիկը միշտ անհաստատ է դառնում, աւելի նման պրոլետարիատի. մինչդեռ մեծ մթերանոցների մէջ, միաժամանակ եւ յարատեւօրէն, բարձրանում է գործաւորների թիւը — զուտ պրոլետարներ, երբ և է անկախ դառնալու յոյս չունեցողներ։ Կնոջ և երեխայի աշխատանք՝ անառակութեան հետ ընկերացած, չափազանց գործ, պակասութիւն գործի, սովամահութեան վարձագներ — մեծ արտադրութեան այդ բոլոր ախտանշանները, նո՛յնպէս յարաճուն քանակութեամբ երեւում են վաճառականական ճիւղի մէջ։ Այդ ճիւղի մէջ աշխատող գործաւորների դրութիւնը արագ օրէն մօտենում է պրոլետարների դրութեան։ Միակ նշմարելի տարբերութիւնը այդ երկուսի միջեւ այն է՝ որ առաջինները լաւագոյն ապրելու երեւոյթը ունին, մի բան՝ որ նրանցից պահանջում է այնպիսի զոհաբերութիւններ, որ խկապէս անծանօթ են ճարտարագործական պրոլետարներին։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ԿՐԹՈՒԹԻՆԸ ԱՊՐԱՆՔ Է ՆԿԱՏՈՒՄ

Պրոլետարիզմի մի երրորդ դասակարգ կայ, որ շատ առաջ է գնացել իր կատարեալ զարգացման մէջ,— դա կըրթուած պրոլետարն է։ Մեր ներկայ սիստէմի ներքոյ կրթութիւնը մի մասնաւոր արհեստ է դարձել։ Ուսումը այժմ շատ տարածուել է եւ օրէցօր էլ տարածւումէ։ Կապիտալիստ ընկերութիւնը և կապիտալիստ պետութիւնը միշտ կարիք ունին ուսումնական և հմուտ մարդոց՝ իրենց գործերը վարելու, բնութեան ոյժերը իրենց իշխանութեան տակն առնելու — արտադրութեան կամ քանդելու նպատակով — եւ իրենց ստացած մեծագումար շահերը ճոխութեան մէջ շըռայլելու։ Արդ, ոչ միայն յոգնաշխատ փոքր ագարակագործը, գործաւորը կամ պրոլետարները, ընդհանրապէս, ժամանակ չունին նուիրուելու գիտութեան եւ արուեստների, ապա և՛ վաճառականը, տարաշագործը, բանկիրը, արժառևտրողը [agioteur], կալուածատէր դասակարգը,— սրանք բոլորն էլ միևնոյն դժուարութիւնների մէջն են։ Նրանք իրենց բոլոր ժամանակը տուած են կամ աշխատելու, կամ իրենց զբաղումին և կամ զուարճութիւններին, ինչպէս որ դէպքը կարող է բերել։ Նորագոյն ընկերութեան մէջ, ինչպէս որ ընկերային առաջին շրջաններումն էր, շահագործողները իրենք, կամ գէթ նրանց մէկ մասը, ո՛չ

արուեստներն են մշակում եւ ոչ էլ գիտութիւնը։ Ներկայ շահագործողները, մեր ղեկավարիչ դասակարգը, այդ աշխատութիւնները թողնում են մի մասնաւոր դասակարգի, որոնց որ իրենք վարձում են։ Այս սիստէմի ներքոյ կրթութիւնը դառնում է մի ապրանք։

Հարիւր տարի սրանից առաջ այդ ապրանքը հազուագիւտ էր։ Շատ քիչ դպրոցներ կային. ուսման համար էլ շատ ծախք էր հարկաւոր։ Փոքր արտադրութիւնը որքան ժամանակ որ կարողանում էր պահպանել աշխատաւորին, նա էլ այնքան իրեն տալիս էր ուսման. միայն բնութեան մասնաւոր ձիրքերը կամ նպաստաւոր հանգամանքները կարող էին պատճառ դառնալ, որ այդ տեսակ աշխատաւորների զաւակները նուիրուէին արուեստներին եւ գիտութիւններին։ Գրեթէ անհաւատալի է ասելը, որ այնպիսի նոր երկրում, որպիսին են Միացեալ-Նահանգները, շատ երկար տարիների ընթացքում, բժիշկ, ուսուցիչ, արուեստագէտ — բոլորն էլ դուրս էին գալիս այդ սահմանափակ դասակարգի սերունդներից։

Այնքան ժամանակ, որքան որ իրերի այդ դրութիւնը երկարեց, կրթութիւն — ապրանքը բարձր գին ունէր։ Ուսում ունեցողները, նրանք՝ որոնք ուսումը եւ գիտութիւնը գործադրում էին գործնական նպատակների համար, օրինակ փաստաբանները, բժիշկները, պրոֆեսորները, և այլն, շատ լաւ բարեկեցիկ կեանք ունէին և յաճախ էլ պատիւ ու յարգանք էին վայելում։ Միապետական երկրներում արուեստագէտը, բանաստեղծը, փիլիսոփան արքայական դահլիճների հիւրերն էին. Միացեալ-Նահանգներում այդպիսիները անվիճելի ականաւոր անձինքներ էին համարւում։ Մտաւոր ազնուականութիւնը իրեն բարձր էր զգում ծնունդի կամ դրամի ազնուականութիւնից։ Այդպիսիների միակ հոգսն էր իրենց մտաւոր զարգացումը։ Եւ այդ տեղից յառաջանում էր այն, որ մտաւորապէս մշակուած մարդիկ կարող էին իդէալիստ լինել և յաճախ իդէալիստներ էլ էին։ Այդ հանգամանքով է բացատրւում այն երեւոյթը, որ քառասնական թուականներին տղամարդկանց եւ կանանց մի խումբ ձեռք առան Ֆուրիէի իդէալիստ փիլիսոփայութիւնը, որի հետեւանքը այն եղաւ, որ կոմունիստական մակընթացային մի ալիք, այն ժամա-

նակները, Միացեալ-Նահանգների վրայով անցաւ։ Այդ տեսակ կրթութեան եւ մասաւոր մշակման աղնուականները աւելի բարձր էին կանգնած միւս դասակարգերի նիւթական ձգտումներից և հակամարտութիւններից։ Կրթութիւն նշանակում էր այժ, երջանկութիւն եւ արժանաւորութիւն։ Եզրակացութիւնը անխուսափելի էր թւում, որպէսզի ամէն մարդ բախտաւոր եւ երջանիկ լինէր, որպէսզի երկրից վտարուէին դասակարգային ամէն ներհակութիւն, ամէն տեսակ խեղճութիւն, չարութիւն եւ ստորութիւն, ուրիշ բան պէտք չէր, եթէ ոչ միայն կրթութիւնը տարածել եւ դարձեալ կրթութիւնը։

ԿՐԹՈՒԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՃՈՒՄԸ

Այդ օրից սկսած՝ բարձր կրթութեան զարգացումը ահագին յառաջադիմութիւն արեց։ Ուսման հաստատութեանց թիւը զարմանալի կերպով շատացաւ, բազմացաւ մեծ ստիճանով եւ՝ աշակերտների թիւը։ Մինչ այդ՝ փոքր արտադրութեան հիմունքը խախտուեցաւ։ Փոքր սեպհականատէրը այսօր ուրիշ միջոց չունի թոյլ չտալու իր զաւակներին պրոլետարների մէջ ընկնելու, քան նրանց ուղարկելու միջնակարգ դպրոցներ, եւ նա այդ էլ անում է երբ միայն իր միջոցները ներում են։

Սակայն բացի դրանից, նաև ինկատի պիտի առնի ոչ միայն իր որդու, այլ եւ՝ իր դստեր ապագան։ Աշխատանքի բաժանման արագ զարգացումը միշտ ոտնձգութիւններ է անում տնարարութեան վրան։ տնարարութեան պարտականութիւնը, մէկը միւսից յետոյ, մասնաւոր ճարտարագործութեան է նա վերածում եւ արագօրէն նուազեցնում է տնային գործը։ Մի ժամանակ տնային պարտականութեան ցանկի մէջն էին՝ ոտայնանկելը, կարելը, հիւսելը, հացթխելը եւ այլ շատ ուրիշ զբաղումներ, իսկ հիմա դրանք ամբողջապէս, կամ մեծաւ մասամբ, տանտիկնութեան գործերի շրջանից դուրս են։ Իրրեւ արդիւնք այդ բոլորի, ամուսնութիւնը հետզհետէ դառնում է մի պերճանք, քանի որ կինը տան կառավարիչն է միայն լինում, իսկ դրա հետեւանքն էլ լինում է այն, որ փոքր սեպհականատէրը և փոքր արտադրողը արագընթաց կերպով դէպի աղքատութիւն են դիմում և հետզհետէ կորցնում այդ պերճանքին անձնատուր լինելու միջոցները։ Ուստի ամուրի

աղջկանց թիւը արագ աճում է, և բազմանում է այն ընտանիքների թիւը, որոնց մէջ մայրը եւ աղջիկը պէտք է գործեն ապրուստ ճարելու համար։ Հետեւաբար՝ կնոջական աշխատանքը ոչ միայն շատանում է թէ մեծ եւ թէ փոքրը արտադրութեան եւ վաճառականութեան մէջ, ապա նա թափանցում է եւ՝ կառավարական պաշտօններում, հեռագրական, հեռախօսի, երկաթուղիների, բանկերի, զրագրական սենեակներում— տոմարակալ, սղագրող, և այլն— ինչպէս և գիտութեան ու արուեստների ոլորտի մէջ։ Որքան էլ որ խորարմատ նախապաշարումներ եւ անձնական շահեր ըմբոստանան այդ հոսանքի դէմ. այնու ամենայնիւ կնոջական աշխատանքը մեծ քայլերով յառաջ է գնում զանազան արհեստագիտական գործերում։ Դա ոչ պարծենկոտութիւն է, ոչ անպատշաճութիւն եւ ոչ էլ հպարտութիւն, այլ տնտեսական զարգացման այժն է, որ կնոջը մըղում է աշխատելու այս՝ ինչպէս եւ մարդկային գործունէութեան ուրիշ շրջաններում։ Այն երկրներում եւ Միացեալ – Նահանգների այն տեղերում, ուր մարդիկ՝ յաջողած են կանանց մրցումը վտարել մտաւոր հետախուզութիւնների այն ճիւղերից, որ դեռ կազմուած են հին Արհեստակցական - Ընկերութիւնների (համքեարական) սկզբունքով, — կինը աւելի մեծ ուժով հետապնդում է այն զբաղումներին, որ դեռ այդ ձեւով կազմակերպուած չեն, օրինակ՝ գրականութիւն, նկարչութիւն, երաժշտութիւն, եւ այլն։

Այս բոլոր տեսակ զարգացման հետեւանքն այն է, որ կրթուած դասակարգի թիւը ահագին կերպով աւելացել է։ Սակայն չստացուեց այն բարերար հետեւանքը, որ իդէալիստները սպասում էին կրթութեան տարածումից։ Քանի որ կրթութիւնը մի ապրանք է, ապա նրա տարածումը համահաւասար է այդ ապրանքի քանակութեան շատացմանը, հետեւաբար եւ իր գնի անկմանը ու կրթութիւն ունեցողների բարօրութեան նուազմանը։ Կրթուած ժողովրդի թիւը այնքան շատացել է, որ նա աւելի քան բաւական է կապիտալիստների եւ կապիտալիստ պետութեան կարիքներին։ Կրթուած աշխատանքի վաճառանոցը այսօր նոյնքան է կուտակուել կրթութիւն — ապրանքով, որքան որ ձեռքով գործող աշխատանքի վաճառանոցը։ Այսօր ձեռքով աշխատողներն չեն այլեւս՝ որ ունին իրենց անգործների պա-

հեստի բանակը եւ նրանց գործերի մէջ մի՛այն թուլութիւն կայ, այլ կրթուած գործաւորներն էլ ունին իրենց պարապորդների պահեստի բանակը եւ նրանց մէջն էլ գործերի թուլութիւնը իր մշտական բանակատեղն ունի կազմած։ Հասարակական պաշտօնների ձգտողները փորձով գիտեն պաշտօն ստանալու դժուարութիւնը՝ թեկնածուների շատութեան պատճառով. ուրիշ ճիւղերի մէջ պաշտօն որոնողները նոյնպէս փորձով գիտեն թէ պարապորդութեան եւ միաժամանակ ծայրայեղ աշխատանքի նոյն չափազանցութիւնները կան թէ ձեռքով աշխատողների եւ թէ ուղեղով աշխատաւորների համար, որ վերջիններն էլ առաջինների նման վարձագնի սորկութեան զոհերն են։

ԳԼՈՒԽ Թ.

ԿՐԹՈՒԱԾ ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՐՈՒՆԱԿԱՐԸԸՆ ՎԱՏԹԱՐԱՆՈՒՄ Է

Կրթուած գործաւորների դրութիւնը ակներև կերպով վատթարանում է. առաջ ժողովուրդը խօսում էր «մտաւոր աշխատանութեան» մասին, այսօր մենք խօսում ենք "մտաւորական" կամ "կրթուած" պրոլետարի մասին. մօտ է այն ժամանակը, երբ այդ տեսակ պրոլետարների զանգուածը միլիոններից կը տարբերուի միայն իր մեծամտութեամբ։ Նրանցից շատերը դեռ երևակայում են որ իրենք աւելի լաւ դրութիւն ունին, քան թէ ձեռքով աշխատող պրոլետարները. նրանք կարծում են թէ իրենք ղեկավարիչ դասակարգին են պատկանում, բայց այդ պիսիների դրութիւնը ոչնչով չի տարբերուում այն սպասաւորներից, որոնք իրենց տէրերի կառքի յետևը նստած՝ լորդի ձեր են բանեցնում։ Այդ «կրթուած պրոլետարները» կապիտալիստ դասակարգի մտաւոր ղեկավարիչները լինելուց դադրած են. նրանք, այսօր, կապիտալիստի եւ կապիտալիստ հաստատութիւնների համար ա՛յն նշանակութիւնը ունին, ինչ որ "կռփամարտիկները" եւ "լարախաղացները" ստորին գինետների համար։ Նրանց գլխաւոր նպատակներն են մեքենայութիւն և դաւադրութիւն. նրանց առաջին մտածմունքը չէ իրենց մտաւոր ապրանքների զարգացումը, այլ այդ ապրանքների վաճառելը. նրանց յառաջ երթալու գլխաւոր մէթոդն է իրենց սեպհական անհատականութեան պռռնկացումն։ Ինչպէս որ փոքր արտադրողները, «մտաւոր պրոլետարները» նոյնպէս շլացած են կեանքի վիճակախաղի մի քանի փայլուն մրցանակներով, ուստի իրենց աչքերը փակում են կեանքի անիւի անհամար պակասութիւնների վրան եւ իրենց մարմինը ու հոգին ծախում են, որպէսզի միջոց ունենան այդպիսի մրցանակներ ձեռք բերելու։ Համոզմունքները վաճառել եւ փոփոխել կամ դրամի համար ամուսնանալ — սրանք մեր կրթուած պրոլետարների մեծամասնութեան համար՝ երկու բնական և անհրաժեշտ միջոցներ են, որպէսզի «մէկը իր բախտը չինի»։ Արտադրութեան կապիտալիստ սիստէմը այդպիսի արարածներ դարձրեց մեր իդէալիստներին, գիտնականներին, մտածողներին եւ երազողներին։

Բացի դրանից՝ այս դասակարգի թիւը այնպիսի մեծ արագութեամբ է շատանում, որ այլևս կրթութիւնը շատ մեծ նշանակութիւն չունի, նոյն իսկ եթէ մէկը իր անհատականութիւնը վաճառքի հանի։ Կրթուած ժողովրդի՝ պրոլետարիատ դասակարգի մէջ ընկնելու առաջը, ոչ ոք կարող է առնել (14)։

Արդեօք այս զարգացման հետեւանքով սկիզբն կառնի՞ մի շարժում, որով կրթուած ժողովուրդ կաչխատի միանալ կռուող պրոլետարիատի զանգուածի հետ, թէ՞ նա կը կղզիանայ, մինակ կմնայ, — դա դեռ եւս անորոշ

(14) Պրոֆեսիոնալ դասակարգի մեծագոյն զանգուածը, նրա այն մասը, որ յարաճուն թուով բազմանում է, իր տնտեսական անկախութեամբ կարող է պարծենալ այնքան, որքան որ ձեռքով աշխատողը. թէեւ նա, միջին աստիճանով, ապրուստի աւելի լաւ յարմարութիւններ ունենար։ Գրքեր, գործիքներ, հանդերձեղէններ եւ այլն, համաձայն պարապմունքներին, միակ եւ անհրաժեշտ սեպհականութիւններն են այս դասակարգի ջախջախիչ մեծամասնութեան համար։ Այս աղքատ խաւից է — այսպէս ասուած մտաւորական պրոլետարիատից — որ Սոցիալիզմը, այն երկրներում, ուր նա ամենաուժեղն է, ստանում է իր գործունեայ, տաղանդաւոր եւ խիզախ ախոյեանները։
— "Սոցիալիստ Օրացոյց՝ էջ 104։

է։ Սակայն որոշ է այն իրողութիւնը, որ կրթուած դասակարգը հետզհետէ պրոլետարանում է։ Եւ այդպիսով փակում է պրոլետարիատ դասակարգին մնացած այն միակ դուռը, որ տակաւին բաց էր եւ որի միջով՝ իրենց անձնական ջանքերով՝ շատ պրոլետարներ կարող էին սպրդիլ եւ այդ դասակարգի մէջը մտնել։

Այլեւս խօսք չի կարող լինել այն մասին, որ վարձագնով աշխատողը կարող է կապիտալիստ դառնալ, այդ բանը անկարելի է իրերի սովորական ընթացքի մէջ։ Երբ խօսւում է գործաւոր դասակարգի մասին, մտածող մարդը երբէք աչքի առաջ չի կարող ունենալ այն պատահմունքը, թէ մի գործաւորի կարող է ընկնել Լուիզիանայի վիճակահանութեան տարող տոմսը, կամ թէ մէկը յանկարծ կարողանայ դառնալ մի անծանօթ ազգականի հարստութեան։ Նախկին ժամանակներում, այս եւ այն տեղ, նպաստաւոր մասնաւոր հանգամանքների ներքոյ, պատահում էր որ մի գործաւոր, մեծ զրկանքների շնորհիւ, յաջողում էր խնայել բաւականաչափ դրամ սեպհական փոքրիկ գործ սկսելու կամ փոքրիկ մանրավաճառի խանութ բանալու, կամ յաջողութիւն ունենար իր որդուոյն ուսման տալու, որպէսզի իր հօրից "աւելի լաւ" դրութիւն ունենար։ Զափազանց ծիծաղելի կը լինի, եթէ կարծուի որ այդպիսի պատահմունքներով բոլոր գործաւորները կարող են իրենց դրութիւնը բարելաւել։ Կեանքի սովորական ընթացքում գործաւորը շատ գոհ պիտի լինի իր բախտից, եթէ նա ճարպիկ լինի եւ գործի յաջող ժամանակներում կարողանայ բաւականաչափ դրամ մի կողմ դնել, որպէսզի բոլորովին դատարկաձեռն չմնայ երբ գործերը թուլանում են։ Սակայն, այսօր, այդպիսի կարելիութիւններ մտածելը գործաւորի համար՝ աւելի ծիծաղելի կը լինի՝ քան երբ եւ է։ Տնտեսական ներկայ զարգացումը ոչ միայն խնայողութիւնը հետզհետէ դժուար է դարձնում գործաւորի համար, եթէ այդ երբ եւ իցէ կարելի էր, այլ նաեւ բոլորովին անկարելի է դարձնում, եթէ նոյն իսկ նա կարողանար մի փոքր բան խնայել որ իր այդ խնայածով կարողանար իրեն եւ իրեն զաւակներին պրոլետարիատ դասակարգից դուրս հանել։ Եթէ նա իր փոքրաքանակ խնայած դրամներով ուզի անկախ մի գործ բռնել,

դա նրա համար կլինի կասկարայից կրակի մէջ նետուիլ։ տասնից ինը վստահաբար կարելի է ասել, որ նա նորից իր նախկին դրութեան մէջը կընկնի, ստանալով այն դառն փորձառութիւնը, թէ փոքր արտադրողը այլեւս չի կարող իր գլուխը ջրից վեր պահել — մի փորձառութիւն, որ նա ձեռք բերած կը լինի իր արիւն քրտինքով խնայածը կորցնելով։

Դրանից աւելի դժուար է պրոլետարի համար փորձելը իր որդուն բարձր ուսման տալու։ Բայց ենթադրենք, նոյն իսկ, որ որդին այդ բարձր կրթութիւնը ստանայ, և այդպիսի մի փորձ էլ յաջողութեամբ պսակուի, ի՞նչ ծառայութիւն պիտի մատուցանի միջնակարգ կրթութիւնը պրոլետարիատի որդուն, որ առանց դրամագլխի, առանց ազդեցութեան չի կարող սպասել բարեյաջող հանգամանքի, որպէսզի իր գիտութիւնը վաճառի։ այն էլ այնպիսի օրերում, երբ հազարաւոր փաստաբաններ, բժիշկներ, ճարտարապետներ եւ պրոֆեսիոնալ ամէն տեսակ պաշտօնեաներ անօթի են մընում։

ՍՕՑԻԱԼԻՍՏ ՀԱՆՐԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՑՈՅՍ ԱՇԽԱՐՀԻ

Այսօր ի՞նչ ճանապարհ էլ որ ուզի բռնել պրոլետարը, նա միշտ կը հանդիպի կեանքի եւ տառապանքի մի եւ նոյն պրոլետարական պայմաններին։ Այդ պայմանները հետզհետէ թափանցում են բոլոր ընկերութեան մէջ։ ամէն երկրների մէջ ժողովրդի ահագին զանգուածը կանգնած է պրոլետարական մակերեւոյթի վրայ։ անհատական պրոլետարի համար կորած է ամէն յոյս, թէ նա կարող է իր սեպհական ջանքերով դուրս գալ այն խորխորատից, որի մէջ իրեն ձգել է արտադրութեան ներկայ սիստէմը։ վաթսուն և հինգ տարի որանից առաջ՝ Ջէյմս Մադիսընի արած կանխասութիւնը այսօր տառացի կերպով կատարուել է։ այն կանխասութիւնը, որ ասում էր թէ մեր ընկերային սիստէմի մրցման շնորհիւ՝ շատ ժամանակ չի քաշիլ, որ մեր ժողովրդի մեծամասնութիւնը ոչ միայն իր բոլոր սեպհականութիւնը կկորցնի, այլ կկորցնի և՝ յոյսը թէ երբ եւ իցէ կարող է ունենալ սեպհականութիւն ձեռք բերել։

Անհատ պրոլետարը իր սեպհական փրկութիւնը կարող է ձեռք բերել միմիայն իր ամբողջ դասակարգի փրկու-

թեամբը։ Իսկ այդ նպատակին կարելի է հասնել միայն այն ժամանակ, երբ արտադրութեան բոլոր գործիքները հաւաքական սեպհականութիւն կլինին ամբողջ ժողովրդին։— այսինքն երբ կիրի Սոցիալիստ Հանրավարութիւնը։

Նախկին ընկերային ամէն յեղաշրջման ժամանակ, թող դա լինի էվոլիւցիա, մի դասակարգ միւս դասակարգի տեղն էր անցնում. մի դասակարգ միւսին էր յաջորդում։ Օրինակ, նահապետական դասակարգի տեղն անցաւ աստուածպետական դասակարգը. աստուածպետական դասակարգի տեղը բռնեց աւատական դասակարգը. եւ մեր օրերում՝ աւատական դասակարգին փոխանորդեց կապիտալիստ դասակարգը։ Այս բոլոր օրինակներում վարի մէկ դասակարգ գլորել է վերի մէկ դասակարգին, ազատել է իրեն՝ միւսներին ստորադասելով, և այդպիսով մարդկային շահագործման նոր ձև է մտցրել։

Ընդհակառակը, ունենալ Սոցիալիստ Հանրավարութիւն, ոչնչացնել դասակարգային ամէն հակամարտութիւններ՝ տապալելով մարդկային շահագործման վերջին սիստէմները, իրեն փրկել ամբողջի փրկութեամբ — այդ է Պրոլետարիատի պատմական միսիան. դա է այն ազնիւ նպատակը, որ հպարտութեամբ լցնում է ամէն Պրոլետարի կուրծքը և քաղցրացնում նրա դառնութեան բաժակը. Պրոլետարի, որ գիտակից է իր դասակարգային խըստութեան և այն պարտականութեան, որ նոյն այդ դասակարգային խարութիւնը դնում է իր վրան։

ՌՈՒԸՆԴԻՍԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա. — Մեքենաների ազդեցութիւնը։ — Կապիտալիստ արտադրութիւնը բազմացնում է պրոլետարիատի թիւը — Պրոլետարի աշխատանքը կապիտալիստական շահի աղբիւրն է — թէ ի՛նչպէս մեքենաները ստորացնում են գործաւոր դասակարգի դրութիւնը։

ԳԼՈՒԽ Բ. — Վարձաքներ։ — Կապիտալիստի իւրացրած աւելցուքի չափը — Ազդեցութիւնները, որոնք վարձաքները բարձրացնելու կամ ցածրացնելու միտումն ունին — Մեքենաները կապիտալիստ դասակարգին միջոց են տալիս կանանց եւ երեխաներին շահագործելու։

ԳԼՈՒԽ Գ. — Պրոլետարեան ընտանիքի քայքայումը։ — Կնոջական աշխատանքը ճարտարարպետութեան մէջ՝ քայքայում է գործաւորի ընտանեկան կեանքը — Կապիտալիստ դասակարգը ջանք է անում քանդելու ընտանիքը։

ԳԼՈՒԽ Դ. — Անբարոյականութիւն։ — Արտադրութեան կապիտալիստ սիստէմը մղում է դէպի անբարոյականութիւն — Կապիտալիզմի ներքոյ անբարոյականութիւնը ընկերութեան մի սիւն է դառնում։

ԳԼՈՒԽ Ե. — Վարձաքնով աշխատող պրոլետարիատի նախնական օրերը։ — Գործաւոր դասակարգի դրութիւնը կապիտալիզմի նախնական օրերում — Աշխատող պրոլետարիատը սկզբում իր ծագումը առել է խղճկների թշուառներից։

ԳԼՈՒԽ Զ. — Գործաւոր պրոլետարիատի բարձրացումն — Տնանկների և գործաւոր պրոլետարիատի միջև եղած հակադրութիւնները — Թէ ինչու գործաւոր դասակարգը ատում և արհամարհում է հարստին— Կապիտալիստ դասակարգը անգիտակցօրէն կրթում է գործաւոր դասակարգին այն մէթոդների մէջ, ինչ որ պահանջւում է կապիտալիզմը տապալելու համար — Աւատականութեան և կապիտալիզմի ներքոյ եղող գործաւորների համերաշխութեան միջև եղած հակադրութիւնները — Կապիտալիզմի ներքոյ գործաւոր դասակարգի բոլոր հատուածները իրարու հետ կապուած են։

ԳԼՈՒԽ Է. — Պրոլետարիատին բարձրացնող և ստորացնող հակամիտումները։

ԳԼՈՒԽ Ը. — Ճարտարագործական պահեստի բանակը։— Անգործների բանակը կազմւում է ներգաղթականութեան միջոցով — Անգործների բանակը կազմւում է կանանց և երեխաների աշխատութեան պատճառով — Անգործների բանակը կազմւում է մեքենայականութեան ներմուծման շնորհիւ — Անգործների բանակի արժէքը կապիտալիստ դասակարգի համար։

ԳԼՈՒԽ Թ. — Պրոլետարիատի յարաճումն -- վաճառականական եւ կրթուած պրոլետարիատը — Կապիտալիզմի ազդեցութիւնը փոքր մթերանոցների վրայ — Կապիտալիզմը կրթութիւնը ապրանք է նրկատում — Կրթուած ժողովրդի աճումը — Կրթուած գործաւորների դրութիւնը չարունակարար վատթարանում է — Սոցիալիստ Հանրավարութիւնը որպէս յոյս աշխարհի։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0205445

ԵՒՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

գրեց

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

գինն է 1 Ֆրանկ

Կ. ԿԱՈՒՑԿԻ

ԳՈՐԾՈՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

(ԳՐՕԼԵՏԱՐԻԱՏԸ)

թարգմանեց

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

գինն է 25 սենթ

Շուտով լոյս պիտի տեսնեն, Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆԻ թարգմանութեամբ, Կ. ԿԱՈՒՑԿՈՒ հետևեալ գրքոյկները՝

"ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԸ"

"ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՒՒ"

"ՍՕՑԻԱԼԻՍՏ ՀԱՇԵՐԱՎԱՐՈՒԹԻՒՆ"

Ցանկացողները կարող են ստանալ՝ դիմելով "ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ"ի խմբագրութեան,

112, Essex, P. O. Box, Boston—Mass. (U. S. A.)